En definitiva, llegamos a *la conclusión de que el origen* del pueblo armenio está en la fusión de numerosas razas pertenecientes a dos grandes grupos étnicos, el indoeuropeo y el asiánico, también llamado **"armenoide"** por ciertos historiadores, pues los antropólogos consideran a los armenios los prototipos de la raza asiánica.

Las razas de origen indoeuropeo son: Frigios (Mushki) - Armén

Las asiánicas son las siguientes: Hurritas - Halá. Y las razas de Nairí (que luego integraron el Urartú).

Como en todos los pueblos del mundo, la formación del pueblo armenio ha sido simultánea con el perfeccionamiento del estado. Después de la organización del estado armenio, de la fusión de las razas de diversos orígenes étnicos que habitaban su territorio, nace el pueblo armenio. Este proceso de fusión comienza en el siglo VI y concluye en el I a. de C. En esta mezcla de razas los halá impusieron su nombre y su idioma a las demás. El pueblo de Armenia comenzó a llamarse **"hal"** y hablar la lengua armenia **("Halerén")**.

Todos los pueblos del mundo tienen su origen en la fusión de diversas razas, pero no sucede lo mismo con los idiomas empleados en el presente. Un idioma no nace de varios otros, sino que se impone a los demás, aunque enriqueciendo su vocabulario con palabras y giros de las lenguas que han de desaparecer.

Esto es lo que sucedió con la lengua armenia, el idioma impuesto por los halá.

El idioma armenio, por su vocabulario básico, construcción sintáctica y pronunciación, pertenece a la familia de lenguas indoeuropeas y constituye una de sus ramas.

Antoine Meillet, lingüista francés, ha emitido la siguiente opinión acerca del idioma armenio:

"El sistema del alfabeto armenio es una obra de arte. Cada uno de los fonemas de la fonética armenia está señalado por un signo propio, el sistema tan perfectamente establecido dotó a la nación armenia con una expresión definitiva de fonetismo, expresión que se ha mantenido hasta el presente sin sufrir ningún cambio, puesto que fue perfecta desde el comienzo".

(Fuente: **"Historia ... Pueblo Armenio", de A... Artzr...**

Erevan 50 y "Lusavor Yerguire Mer"

El renombrado conjunto uruguayo **Erevan 50** acaba de editar dos cassettes de canciones que reunidas bajo el nombre del título "Lusavor Yerguire Mer" (Nuestra Iluminada Patria), contiene esta canción juntamente con otras tales como "Eres el Fuego para Mí", "A los Niños del Mundo" y "Elevación".

En esta grabación intervienen: Alejandro Barsamian, en Bajo y Percusión; Henry Krikor Paklayan en Teclados; Daniel Barsamien como Vocalista; José Carlos Bedrosian en Batería; Miguel Barsamian en guitarra y como vocal... además de José Geoz... raian y Alejandro Sa... sian. Integran el Coro Mayores: Silvia E... dakchian, Gabriela V... dakchian, Stella Ba... Mery Koundakjian y V... Barsamian. En cuanto Coro de Niños está *puesto por Melin...* kerian, Adriana ... rian y Noemí Kouyoian.

Un hermoso grupo de canciones, bien interpretadas, digno de ser tenido en casa y que, además, viene con la letra del cancionero para cantarla en familia.

Se honró a los veinte mártires Hnchakian

La Catedral de San Gregorio El Iluminador fue el marco adecuado para el recuerdo de los 20 mártires Hnchakian, que en 1915 fueron ahorcados por los turcos por el delito de defender su Patria, su Fe y la Libertad. La ceremonia evocativa comenzó con una Misa y Responso por el alma de esos jóvenes patriotas, tras la cual se procedió a colocar una ofrenda floral en el monumento a los mártires armenios. Este acto se llevó a cabo en la mañana del domingo 12 de junio y, luego, a las 13, tuvo lugar un acto académico en la sede de la Unión Cultural Sharyum, oportunidad en que usaron de la palabra el señor Samo Sarkissian, el R.P. Shavarsh Mehrabian, Mons. Krikoris Pouniatian y el doctor Pascual Ohanian, quien reseñó con conceptos claros y precisos el calvario de los jóvenes mártires, para finalizar con un canto pleno de simbolismo que entonara Panvor ante de morir. **"En todas partes es una la muerte/Sólo una vez el hombre morirá/Pero suerte la de aquél que ha sacrificado su pueblo, por la libertad.**

PROFESIONALES

CONTABILIDAD IMPOSITIVA

Dr. Ricardo Delanian
Estudio Contable Impositivo
Contador Público U.N.C.
Entre Ríos 263 1° 4
T.E. 3-1141 - CORDOBA

ABOGADOS

Dr. Juan Carlos Merdinian
Abogado
Rondeau 578 T.E. 051-45215
CORDOBA

Lutufyan Hnos. S.A.

Fábrica de pañuelos y toallas
Estamperías
y tintorerías de hilados
Larrea 738 Cap. Fed.
Francia 275 San Martín (Pcia. de Bs. As.)

SINTONICE AUDICION CULTURAL TEKEYAN

La cultura y el quehacer de la armenidad

Domingos de 10,5 a 11 horas.

CX. 10 Radio Continente (Uruguay)

(735 khz. al lado de Radio Mitre)

VIDEO Y FOTOGRAFIAS
VIDEOLOOK
JUNIN 49 - 3° "J"
TEL. 953-4135/258-8780
PUBLICIDAD
SOCIALES
RETRATOS

ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆՆԵՐԸ

Դաղափարի հաւատաւոր վիճաբանութիւններ Լիլի անունի։ Քանի հայ անյուսական հերոսներ՝ բոլորն ալ վիճակից իրենց պարտականութեան. բոլորն ալ տակաւին իրենց գործուն տակին մէջ. բոլորն ալ տոգորուած մարտունակութեան հաւակնոտ ոգիով,որուն կու գային փաստաւոր ներշնչումներ՝ հայ պանծալի դիւցազներգութենէն։

Յաջողութեամբ կատարած Լիլի իրենց սրբազան առաքելութիւնը, եւ հանդարտ Լիլի առաջ համար, իւրաքանչիւրին Լիլի անունէ. եւ իրենց վերադարձին յարգանքի կը պարտադրէր։ Այնմ՝ կը սպասէին, վայելչութեամբ եւ արժանապատուութեամբ տալ իրենց վերջին աւարտը՝ գերազոյն զոհաբերութիւնը։

1915 Յունիս 15. տխրահռչակ Սուլթան Պայազիտ ամրոցի հրապարակին վրայ, աղջամուղջի ատեն լսելի տակ՝ Փարամազ եւ իր տասներիւնը բաջարի ընկերներուն, մէկ սիրտ եւ մէկ հոգի եղած՝ կախաղան կը յառաջանային հաստատ էայլերով, եւ բարձր ու պայծառ ձայնով։ Ո՛չ իրենց ներբիներ, ո՛չ ալ արտասիրներ կը մատնէին տակարութեան կամ վհատութեան ամենաչնչոդ նշաձեր։

Կախաղանին վրայ՝ շուարած էր եւ յուսահատած թուրք դահիճը, որ հերոսներուն դէմ ըներուն վրայ, իր զուր փնտռելէ ետք վախի որեւէ արտայայտութիւն՝ հանդիպած անհուն խաղաղութեան եւ գոհունակութեան ուրուագիծներուն, նոյնիսկ պահ մը ետ շշմած էր սարսափած··· հոն տեսած վճռակամութեան զօրաւոր դրսեւորումին։ Միայն անոնց հոգիները ներթափանցելով կարելի էր հասկնալ հայրենասէր –որբեան անդրդուելի ու հպարտ – եւ ազատասէնչ ոգին բորբոքող գաղափարի կրակը։

Տասներեք տարեկան հայ պատանի մը, որ ցարդ կ'ապրի, եւ որ դիպուածով կը գտնուէր պատմական այս վայրին մէջ՝ ականատես եղաւ անոնց նահատակութեան, եւ լսեց իր հարազատ ականջով անոնց վերջին աղաղակը։ Այս աղաղակը խորհին մէջ՝ յաղթանակի բացականչութիւն մըն էր։ Ահեղ վերջին պատգամ մը որ կը շեշտէր պայքարի շարունակութեան անհրաժեշտութիւնը՝ հայ ժողովուրդի ազատագրման եւ վերածնած հայրենիքի ի խնդիր։ Այս է որ կը պահպահէին հերոսները··· իբր վարձատրութիւն։

Թուրք «պատժելով» բանաւները՝ ուզած էր «լաւ դաս մը» տալ հայ ժողովուրդին եւ միանգամընդմիշտ վերջ տալ հայ ազատագրական շարժումին, որ արդէն մտած էր իր վարգացման կարեւոր փուլին մէջ։

Ինչպէս միշտ՝ անգամ մը եւս թուրքը սխալեցաւ իր հրէշային հաշիւներուն մէջ։ Ազատագրութեան ջահը վառ մնաց տարիներ շարունակ եւ միեւնոյն այսօր-փարամագներու ցածած ազգային ըմպէր հունտը հինկաւ արգասաբեր ··· հողի վրայ, ծոցեաւ, ծաղկեցաւ, աճեցաւ եւ ուռճացաւ։ Մարմինն առաքինութեանց մարգարէական տեսիլը, ծնած Տխրունիներու···։ Հայը յաղթանակեց Սարտարապատի ճակատամարտին, ունեցաւ երկամեայ հանրապետութիւն, որուն յաջորդեց այսօրուայ Հայրենիքը՝ վերածագկած, եւ շէնշող իրականութեամբ։ Հայաստան մը՝ որ տէր կանգնեցաւ Դարաբաղի մէջ իր ցուցաբերած պատուաբեր ու բարձրաբերձ կեցուածքով՝ իր գաւակներուն։

Հոգ չէ թէ Քսանները չտեսան իրենց հարազատ աչքերով, իրենց հոյակապ երագին իրականացումը։ գուցէ այս չէ՞ ներած բոլոր իսկական մարգարէներուն ճակատագիրը։

Հայ յեղափոխական անդրանիկ շարժում՝ Հնչակեան Կուսակցութիւնը արդար է՝ որ հպարտանայ այսօր,իր բաջերով, որոնք կը պատկանին մէջ ամբողջ հայութեան։ Ձիշդ այս պատճառու է որ՝ այսօր բոլորս կը խոնարհինք անոնց խնկելի եւ անթառամ յիշատակին առջեւ։

Փա՛ռք Քսաններուն։ Փա՛ռք բոլոր հայ հերոս Նահատակներուն, որոնք վկայեցին, իրենց կեանքին գնով, եւ կը շարունակեն վկայել հայութեան համար, մինչեւ մեր «Մեծ երազին» իրականացումը։

Ն.Գ.

ՎԵՐԱԴԱՐՁ

«Սարտարապատ»ի աշխատակիցներ՝ Պրներ. Վահան Գալֆայեան, իր Տիկնոջ հետ, եւ Տիգրան Գահվէճեան, շուրջ ամիս մը Մայր Հայրենիք կեցութենէ ետք՝ իբր հիւրեր Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի, վերադարձան Երկուշաբթի, 13 Յունիսին։

Իրենց այս կեցութեան ընթացքին՝ պատեհ առիթը ունեցան տեսնելու եւ ապրելու Հայ Ազգը յուզող բոլոր հարցերը, ի մասնաւորի ղարաբաղեան հարցը։

«Սարտարապատ» բարի վերադարձ եւ բարօրութիւն կը մաղթէ իրենց։

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ

(Շար. Ասխորդ թիւէն եւ վերջ)

«ՓՐԱՀՏԱՅԻ ՅՕԴՈՒԱԾԸ ՊՂՏԵՑ ՄԵՐ ԵՕԹՆՕՐԵԱՅ ՀԱՆՐԱԺՈՂՈՎ - ՑՈՑՑԵՐԸ»

Սակայն Մարտի 21ից առաջ ի ցոյց բերուած կողմնակալութեան բոլոր ձեւերը, լինի դա «ժամանակ» ծրագիրը թէ կենտրոնական մամուլի ապակողմնորոշող հրապարակումները, լոկ մանկական խաղեր էին, փոքրիկ առուակներ՝ սըտի ու պախարակման այն հեղեղի համեմատ, որ Մարտի 21ին «Փրատան» վիժեց մեր դլխին իր «Զգացմունքներ ու ողջմտութիւն» յօդուածով։ Երբեւի զարիք ժամանակները կը պարզեն՝ թէ ում կողմից եւ ինչ նպատակներով էր կազմակերպուել յիշեալ յօդուածը։ Անկախ ամէնինչից, մենք յայտարարում ենք, որ այդ յօդուածը մեր ժողովուրդի համար հոգեկան Սումկայիթ հանդիսացաւ, որը չսխլխեց ոչ-թէ մեր մարմինն, այլեւ հոգին բզկտեց, ոտնահարեց մեզ բարոյապէս։

Պէտք էր բացարձակապէս զուրկ լինել կատարուածի մէջ խորանալու ընդունակութիւնից, իսկ աւելի ճիշդ՝ ցանկութիւնից, որպէսզի այդքան կեղտ թափել եւ պղծել մեր եօթօրեայ հանրաժողով-ցոյցերը, որոնց ընթացքում մեր ժողովուրդն, ասես, արթնցաւ, կրկին վերածնուեց, մաքրուեց լճացման տարիների տիղմից ու բորբոսից, ժամանակաւոր ձեռք բերած եսասիրութեան, ընչաքաղցութեան, ազգային ու հասարակական ոմնտարբերութեան յատկութիւններից եւ, դուխը բարձր՝ յառնեց իր ճակատագրի, իր փառաւոր պատմութեան առաջը կանգնեց հպարտօրէն, միաձոյլ, վճռաբար, կանգնեց՝ ինչպէս վայել է իր բիբլիական ակունքների կորուսեալ վկայութիւնները վերա-կանգնած հնագոյն ազգին։

Որտեղի՞ց հասկանալի «Զգացմունքներ ու ողջմտութիւն» յօդուածի պատուիրատուները, որ այդ բազմահազար ժողովրդին՝ մտաւորականութեանը, բանաւորներին, գիւղի աշխատաւորներին, ոտքի էր հանել ու հատքել մայրաքաղաքում ոչ միայն Լեռնային Ղարաբաղի խնդիրը։ Նրանցից իւրաքանչիւրի հոգում զարթնել էին պատմական յոչղոլեթեան գեներ։

«ԴԺԳՈՀԻՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆ ԷՐ ԵՐԵՒԱՆԻ ՕՐԵՐ ՏԵՒԱԾ ՑՈՑՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀՈԳՒՈՒԽ, ՈՐՆ Է՛Լ ՊՈՒՐԹԱՒԱՅ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՌԻԹՈՎ»

Ժողովուրդն, ասես, արթնցաւ, կրկին վերածնուեց, մաքրուեց լճացման տարիների տիղմից ու բորբոսից, ժամանակաւոր ձեռք բերած եսասիրութեան, ընչաքաղցութեան, ազգային ու հասարակական ոմնտարբերութեան յատկութիւններից եւ, դուխը բարձր՝ յառնեց իր ճակատագրի, իր փառաւոր պատմութեան առաջը կանգնեց հպարտօրէն, միաձոյլ, վճռաբար, կանգնեց՝ ինչպէս վայել է իր բիբլիական ակունքների կորուսեալ վկայութիւնները վերա-կանգնած հնագոյն ազգին։

Որտեղի՞ց հասկանալի «Զգացմունքներ ու ողջմտութիւն» յօդուածի պատուիրատուները, որ այդ բազմահազար ժողովրդին՝ մտաւորականութեանը, բանաւորներին, գիւղի աշխատաւորներին, ոտքի էր հանել ու հատքել մայրաքաղաքում ոչ միայն Լեռնային Ղարաբաղի խնդիրը։ Նրանցից իւրաքանչիւրի հոգում զարթնել էին պատմական յոչղոլեթեան գեները։

Այստեղ էր եւ 1915 Յունիսի ողբերգութիւնը, նրանց յետնորդների ցաւն ու պոռթկումն, ում հայրերն ու պապերը 70 տարի առաջ ծըստուել ու ոչնչացուել էին։

Այստեղ էր Արաքսից այն կողմ թողնուած հարազատ վայրերի կարօտը՝ որպէս վազուց ի վեր խամրած աստղի հեռաւոր լոյսը, որը կոչուում էր միաւորուելու, որպէսզի մէկը միւսին ապաւինելով՝ մէկմէկու մէջ գտնեն կորցրածը։

Այստեղ էր դժգոհութիւնն այն բանից, որ խորհրդային կառավարութիւնը հարկ եղած չափով կանգնած չէ հայ ժողովրդի թիկունքին՝ ի պաշտպանութիւն վերջինիս իրաւունքների միացեալ Ազգերի կազմակերպութիւնում, ուր ահա արդէն 20 տարի է քննարկըւում եւ իր վերջնական մեղաւոր ճանաչե՞լ հայերի դէմ սանձազերծած, 20րդ դարի առաջին ցեղասպանութեան մէջ։

Դժգոհութիւն՝ նաեւ այն բանից, որ հանրապետութիւնում չարունակւում է բարձրաձայի վիճակը, կաշառակերութիւնը, դրամաշորթութիւնը, բիւրոկրատիան ու կամայականութիւնները, որ Հայաստանն ու նրա մայրաքաղաքը չնչահեղձ են լինում քլորոպրէնից եւ թոյլատրելի չափերը տասնեակ անգամներ

(ՇԱՐ.Ը 11-ՐԴ ԷՋ)

ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՐՑԵՐՈՒՐ ԺԱՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Միջազգային մամուլը վերըստին կ'արձագանգէ Լղիմը Հայաստանի վերամիացնելու գծով արտայայտուած հայրենի պահանջներուն, եւ ասիկ յառաջացած դէպքերուն։ դէպքեր՝ որ սկսան անցեալ Փետրուարի կէսին։

Ստորեւ կու տանք վերջին դէպքերու ժամանագրութիւնը՝ քաղուած օտար մամուլէ։

Ուրբաթ, Յունիս 10։– Լղիմի հայերը չդիմացան երեք տեւողութեամբ գործադուլ մը՝ որ կատարելապէս անդամալուծեց Ատրպէյճանի տնտեսական կեանքը, եւ ուր, բոլ երեւոյթի, իշխանութիւնները անկարող էին հակակշռի տակ առնել կացութիւնը։ «Փրատա» կ'ըսդունի որ Սովետ կեդրոնական մամուլը լուռ կ'անցնի փետրուարէն ի վեր տեղի ունեցած դէպքերուն վրայէն, երբ բռկըսան խռովութիւնները, եւ կը յայտնէ թէ «կացութիւնը դեռ չէ մեղմացած»։

Շաբաթ, Յունիս 11։– Նոր ազգային խռովութիւններ ծագեցան Պաքու–Ատրպէյճանի մէջ. «Բաքինսքի Րաոտչի» Ատրպէյճանի համայնավար կուսակցութեան օրկանի պաշտօնեայ մը բսաւ թէ «Մուք զանգուածներ համախմբուած են փողոցներուն մէջ»։ կ'րսուի թէ ոստիկանութիւնը ի զուր փորձեց զսպել խռովարարները, սակայն՝ կատարելապէս ձախողեցաւ։

Կիրակի, 12 Յունիս։– Հարիւրաւոր հայեր ցոյց կատարեցին, այս գիշեր, Մոսկուայի մէջ, ԹԱՍՍ պաշտօնական լրագրութեան գործակալութեան դիմաց, տեղեկութիւն պահանջելով Պաքուի մէջ տեղի ունեցած անցուդարձերուն մասին, ուր, բսւած ոչ պաշտօնական աղբիւրներու, ոստիկան մը եւ մէկ աւելի հայեր սպանուրուեցան, վերջին ցեղային ընդհարումներու ընթացքին։ Ցուցարարները կը կըրէին ցուցատախտակներ՝ ի մէջ այլոց, հետեւեալ խորագրերով· «Հայ Նակորնի Ղարաբաղ» եւ «Ազատ Ղարաբաղ»։ Մինչ այդ՝ մեծամասնութիւնը 500.000 անձերուն, որոնք այս գիշեր մեծ ցոյցի մը մասնակցեցան երեւանի մէջ – յօժարեցան երեք օր տեւողութեամբ գործադուլ կատարել վազը՝ երկուշաբթի 13 Յունիսէն բսկըսեալ, բսւ ազգայնական գործիչ Մովսէս Կորտիսեան։

Երկուշաբթի, 13 Յունիս։– Հայաստանի եւ Ատրպէյճանի համայնավար կուսակցութիւններու գեկավարները զրդեգրեցին տրամագծօրէն իրարու հակադրուող դիրքորոշումներ՝ տեղային կռիւին նկատմամբ, մինչ գործադուլներն ու ցոյցերը տարածուեցան սովետական Ան-

(ՇԱՐ.Ը 11-ՐԴ ԷՋ)

ԼՈՒՐՏԻ ԲՈՒԺՈՒՄՆԵՐԸ

Գրեց ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ (1890–1945)

Ինչ կը վերաբերի բուժումներուն, (1858 թ. Ծ. Թ.), իսկապէս անոնք ո՛չ թէ վերջ կը գտնէին, այլ ընդհակառակն ամսէ ամիս աւելի կը բազմանային:

Ներհակաբար իր ակնկալութեան, եպիսկոպոսը գտաւ բազմաթիւ պարագաներ որոնք կը պատկանէին անտարակուսելի դասակարգին: Կային, ընդամէնը, տասներինը հատ այդպիսի բոլէական բուժումներ որոնք ամենէն բծախնդիր քննադատութեան կը տոկային, ո՛րքան ալ խիստ ըլլար անիկա: Այդ պատահարներէն երկուքը տեղի ունեցած էին բոլորովին ըսկիզբները:

Կար Մանի Մոռոյի պարագան. ան երիցագոյն դուստրն էր Թարբաս քաղաքի Մոռո ընտանիքին: Տասնվեց տարեկան այդ աղջիկը, որ դպրոց կը յաճախէր Պորտօ քաղաքին մէջ, բոլորովին յանկարծակիօրէն ենթարկուեցաւ աչքի ամենասոսկալի հիւանդութեան մը: Պորտոյի համալսարանի նշանաւոր մասնագէտ ակնաբանը Տոքթ. Պեռնար քննեց ու գտաւ որ երկու աչքերուն ցանցամաշկը (ռեթինա) փրթած էր, ինչ որ անխուսափելիօրէն յառաջ պիտի բերէր ամբողջական կուրութիւն: Այս նախատեսութիւնը շուտով իրականացաւ: Մի քանի շաբաթէն, արիւնալի քողը ամբողջովին մթնցուցած էր շնորհալի աղջկան աչքերը եւ այդ մթութիւնը աւելի խոր կը դառնար ամէն մէկ արթննալուն: Ինչպէս սովորաբար կը պատահի այսպիսի անյոյս պարագաներուն մէջ, ընտանիքը մաքառեցաւ ու պայքարեցաւ եւ անձնատուր չեղաւ անգութ ճակատագրին դիմաց: Կոյր աղջիկը չարչարեցին բուժումի հարիւր տեսակ փորձերով: Ամէնքն ալ անօգուտ մնացած ըլլալով, ի վերջոյ որոշուեցաւ Փարիզ երթալ եւ հոն դիմել հմուտ գիտնականներու: Իբր վերջին փորձ:

Մեկնումէն մէկ օր առաջ, աղջկան հայրը Մոռո պատահմամբ ձեռքին ունեցաւ լրագիր մը ուր կը պատմուէր տիկին Ռիզօ անուն մէկու մը յանկարծական բուժումը Լուրտի աղբիւրին միջոցով: Մոռո յանկարծ վերյիշեց իր անբախտ աղջկան ծննդին պահը: Այդ ծննդաբերութիւնը խիստ դժուարին եղեր էր: Բժիշկը եւ դայեակը ձեռք քաշած էին մանուկէն: Այդ ժամին, Մոռո ուխտեր էր որ եթէ աղջնակը ողջ մնար, անոր անունը Մանի պիտի դնէր, հակառակ անոր որ Մանի Մոռո ինքնատիպ եւ գեղահնչիւն անուն մը չէր:

Ան փոփոխեց ճամբորդութեան նպատակակէտը եւ իր ընտանիքը տարաւ Լուրտ: Աղբիւրէն քարայրը դեռ նոր վերաբացուած էր հանրութեան առջեւ (1858 թ. Ծ. Թ.): Աղբիւրի ջուրին մէջ թրջելէ ետք թաշկինակ մը՝ զետեղեցին Մանիի կոյր աչքերուն վրայ: Երբ թաշկինակը վերցուցին, աղջիկը այնպիսի սուր ճիչ մը արձակեց որ լսող անձերէն ոչ մէկը կրցաւ այլեւըս մոռնալ զայն: Լոյսը արգիլող կաս-կարմիր քողը պատռուած էր: Մանի կարող էր տեսնել: Էջ մը տպագիր թուղթ բռնեցին իր աչքերուն առջեւ: Կրցաւ կարդալ: Եպիսկոպոսի յանձնախումբէն պատուիրակութիւն մը Պորտօ գնաց Տոքթ. Պեռնարի հետ տեսակցելու: Անկէ խնդրեցին իր գրառումները իր հիւանդի անյոյս վիճակին մասին՝ վերջին քննութիւններուն ժամանակ: Ամբողջ պատահարը այնքան անախորժ էր փրոֆեսորի խառնուածքին համար, որ ժամանակ մը ընդդիմացաւ, նախ քան իր գրառումները յանձնելը:

Երկրորդ պատահարը նուազ ուշագրաւ չէր: Ան կը վերաբերէր Պորտօ քաղաքէն ուրիշ դեռատի անձի մը: Անոր անունն էր Ժիւլ, տուրքերու վարչութեան պաշտօնատար Ռոժէ Լաֆասանեի որդին տասներկու տարեկան: Այս պարոնը զինուորականի երեւոյթ ունէր եւ (ներհակաբար Մոռոյի) չէր կրնար ամբաստանուիլ թէ կրօնային բնազդի նոպաներ ունի: Արդ, Ժիւլ ենթարկուեցաւ այն հազուադէպ եւ տարօրինակ հիւանդութեան զոր ժողովրդական լեզուով կը կոչեն Սուրբվիթուսի պար: Այս հիւանդութիւնը այնքան վտանգաւոր չէ անդամներու ոսկրախախտումներ պատճառելուն համար, որքան անոր համար որ յառաջ կը բերէ կոկորդի ուռիլը եւ հետզհետէ խցուիլը, ինչ որ աստիճանաբար գրեթէ անկարելի կը դարձնէ պինդ սնունդ կլլելը: Ընտանիքին բժիշկը Նոկէս եւ խորհրդատու բժիշկ Փրոֆ. Ռոքէ գործածեցին բոլոր այն դարմանները որ կան բժշկական դասագիրքերուն մէջ, ինչպէս նաեւ կարգ մը ուրիշ դարմաններ ալ: Անոնք ցուցաբերեցին այն յամառութիւնը որ յատուկ է՝ իրենց անզօրութիւնը ընդունիլ չուզող բժիշկներուն:

Տղուն կոկորդը հետզհետէ աւելի խցուեցաւ: Ի վերջոյ, մնացող անցքը հիւսքի-ասեղէ մը աւելի լայն չէր եւ ծայրայեղ դժուարութեամբ միայն կ'ընդունէր նոյնիսկ մի քանի կաթիլ կաթը կամ ապուրը: Ժիւլ Լաֆասանեը ստուերի մը վերածուած էր եւ կը թուէր սովամահ ըլլալու դատապարտուած ըլլալ: Իր մայրը զինք տարաւ ծովեզերեայ հանգստավայր մը. թերեւս ովկեանոսին կորովը օգտակար ըլլար: Անօգուտ: Ծովափին վրայ, ուր տարեր էին տղան, ան գտաւ լրագրի պատռուած կտոր մը: Իր վտիտ ձեռքերով բռնելով զայն, կարդաց դեռատի Մանի Մոռոյի բուժումին նկարագրութիւնը: Թուղթի կտորը գրպանը դրաւ, բայց սկիզբը չհամարձակեցաւ իր բաղձանքը յայտնել: Քաջ գիտէր իր հօր նկարագիրը եւ համոզումները եւ կը վախնար որ իր վրայ կը խնդայ: Շատ օրեր ետքն է միայն, երբ յայտնապէս դատապարտուած՝ վերադարձաւ Պորտօ, որ ան վարանքով իր մօրը պատմեց Լուրտի եւ Մանի Մոռոյի պատմութիւնը: Տիկին Լաֆասանեը իր ամուսինէն խնդրեց նոյն օրն իսկ մեկնիլ Լուրտ: Ամուսինը հաւանեցաւ առանց վէճի: Մահուան դիմաց, անհաւատութիւնը շատ աւելի անվստահ է ինքն իր վրայ, քան հաւատքը:

Ռոժէ Լաֆասանեը ինքն իսկ իր բազուկներով շալկած տարաւ իր տղան դէպի քարայրի աղբիւրը: Նախկին զինուորական ըլլալով, տրամադիր չէր պարապ խօսքի հանդուրժելու: Եթէ հրաշքներ կրնան պատահիլ, օն ուրեմն թող պատահին: Ուստի միասին բերած էր տոպրակ մը կակուղ պիսքիւի: Երբ Ժիւլ, անվերջ տառապանքով, յաջողեցաւ կոկորդէն վար ղրկել մէկ գաւաթ ջուրը կաթիլ առ կաթիլ, անհեթեթ հայրը անոր յանձնեց մէկ հատ պիսքիւի եւ իր զինուորական ձեւով արձակեց հրաման. «Հիմա ուրեմն կե՛ր»: Եւ պատահեցաւ առաւել եւս անհեթեթ բան մը. տղան կերաւ: Խածաւ կտոր մը, ծամեց, եւ կլլեց զայն, ոեւէ սովորական մահկանացուի նման: Բարձրահասակ Լաֆասանեը, գորշ փոմփատուր ըզգեստով, մէկ կողմ դարձաւ, գինովցած մարդու պէս տատանելով, եւ ձեռքով իր կուրծքը հարուածեց, եւ իր շունչը բռնուեցաւ. «Ժիւլ կ'ուտէ կոր... Ժիւլ կ'ուտէ կոր...»: Եւ քարայրին մօտ գտնուող անձերը արցունքով փղձկեցան: Իսկ Ժիւլ շարունակեց ուտել, լուռ ու մտածկոտ, եւ շատերուն այնպէս թուեցաւ թէ ապաքինումի կարմրութիւնը արդէն իսկ սկսած էր գունաւորել իր այտերը:

Մանի Մոռո եւ Ժիւլ Լաֆասանեը լոկ երկուքն էին այն տասնինը պարագաներէն զորս Լորանս եպիսկոպոս ընկալեց իբրեւ բնական միջոցներով անբացատրելի եւ իբրեւ իր պահանջներուն համար գոհացուցիչ: Ան միշտ կ'առաջնորդուէր բուժումէն անմիջապէս առաջ արձանագրը-

(ՇԱՐ.Ը 15-ՐԴ ԷՋ)

ԴԱՍԸՆԹԱՑՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ



ԿՆԵԱԶԵԱՆ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՒ ՏԱՅ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ.

Յունիս 4-ին վերջ գտաւ «Հայկական ժողովրդական Նուագարաններու յատկացուած դասընթացքը», որ կազմակերպուած էր Պուէնոս Այրէս Քաղաքապետութեան Մշակոյթի Քարտուղարութեան կից Մնայուն Դաստիարակութեան Բաժանմունքը գործակցութեամբ Հայագիտական Ուսմանց Հիմնարկի: Այս դասընթացքը մաս կը կազմէ «Ոչ-դասական երաժշտական գործիքները» շարքին, ուր մասնագէտներ իւրաքանչիւր դասընթացքի մասնակիցներուն առջեւ կը պարզեն տարբեր ժողովուրդներու կողմէ դարերու ընթացքին մշակուած նուագարաններու պատմութիւնը, բացայայտելով անոնց ծագումը, առանձնայատկութիւնները, փոխազդեցութիւնները, եւայլն: Զորս շաբաթ տեւող դասընթացքը տեղի ունեցաւ Պուէնոս Այրէսի՝ «Սան Մարթին» մշակութային կեդրոնի մէջ, պետական «Մանուէլ Տէ Ֆալա» երաժշտանոցի սրահներէն ներս: Զայն վարեց Հայագիտական Ուսմանց Հիմնարկի անդամ Ջաւէն Կնեազեան իսկ որպէս ընդհանուր համադրող հանդէս եկաւ Անա Սփիվաք: Տարբեր նիստերու ընթացքին դասախօսը անդրադարձաւ հայկական երաժշտական հընագոյն գործիքներու եւ անոնց ծագման հետ առնչուող զանազան տեսութեանց, յիշեց անոնց զարգացումը մինչեւ 20րդ դար, վեր առնելով մանրանկարներու մէջ ներկայացուող սակայն այսօր անհետացած նուագարաններու պարագան: Յատուկ ուշադրութեամբ նշեց հայկական գործիքներու դերը համաշխարհային մշակոյթի այդ բնագաւառէն ներս, ինչպէս նաեւ անոնց հաւանական ազդեցութեան ներգործութիւնը եւրոպական միջնադարեան նուագարաններու կազմաւորման վրայ: Այս վերջին նիւթը յատկապէս առիթ դարձաւ դասընթացքին հետեւող մասնագէտներու միջեւ գաղափարներու օգտաշատ փոխանակումին, ինչպէս նաեւ նոր տուեալներու եւ նոր տեսութիւններու յառաջացման: Այս գծով, մասնաւոր հետաքրքրութեան առարկայ դար-

(ՇԱՐ.Ը 15-ՐԴ ԷՋ)

ԿԻՐԱԿԻ, 26 ՅՈՒՆԻՍ 1988

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳԵԻ ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Վիսենթէ Լոփեսի Ս. Գէորգ Եկեղեցւոյ

ՕԾՄԱՆ 20րդ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ

Պիտի պատարագէ եւ հանդիսութեանց պիտի նախագահէ

Արխենթինահայոց Առաջնորդ՝

ԳԵՐՇ. Տ. ԳՐԻԳՈՐԻՍ Ս. ԵՊՍ. ԲՈՒՆԻԱԹԵԱՆ

Պատարագի Երգեցողութիւնը պիտի կատարէ Կոմիտասեան Քառաձայն Եղանակով

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ,

Ղեկավարութեամբ՝

ԲԱՐՇ. ՆՈՒՊԱՐ Ա. ՍՐԿ. ՏԵՄԻՐՃԵԱՆԻ

Յաւարտ Ս. Պատարագի՝ պիտի տրուի մատաղաւնդան Վարժարանի «Գարլոս Կարապետեան» հանդիսասրահին մէջ:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՂԱՐԱԲԱՂԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՐՑԵՐՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

(ՇԱՐ. 9-ՐԴ ԷՋԷՆ)



«ՔԼԱՐԻՆ» ՕՐԱԹԵՐԹԻ ՄԷՋ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ ՔԱՐՏԷՍԸ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ՅՈՒՆԻՍ 16-ԻՆ.

…երկովկաս ձգտեալ շրջանին մէջ:

Հայ կուսակցական ղեկավար Սուրէն Յարութիւնեան յայտարարեց՝ Լղիմը Հայաստանի կցելու ի նպաստ քուէարկութիւն մը, սակայն Ատրպէյճանցի ղեկավար …Վեզիրով յայտարարեց թէ Ատրպէյճան պիտի չի զիջի հողամասը: Երկու ղեկավարներն ալ ակնարկեցին … ցոյցեր, համայնավարեան երկիրներու ժողովրդաքներուն մէջ:

Երեքշաբթի, Յունիս 14.– Հայաստանի Գերագոյն Սովետը, այս Չորեքշաբթի, 15 Յունիսին, պիտի արտայայտուի Լղիմը իր հանրապետութեան կցելու շուրջ: Մինչ Ատրպէյճանի Գերագոյն Սովետի խորհուրդը, որուն «իրաւասական» սահմաններուն մէջ կը գտնուի Լղիմը, արդէն մերժեց որ խնդրոյ առարկայ հողամասը անջատուի իր հողերէն:

Տրուած ըլլալով դիրքերու այսահաւոր հակասութիւնը՝ կ'ենթադրուի որ Սովետ Միութեան կառավարութիւնը վերջին հաշուով պիտի կատարէ իրաւարարի դերը: Տարբերութիւնները հարթելու եւ որոշում առնելու համար ըստ Սովետ Միութեան սահմանադրութեան 78րդ յօդուածին՝ որ կ'ըսէ.–

«Դաշնակցային հանրապետութիւններու սահմանները կրնան փոփոխութեան ենթարկուիլ, համապատասխան հանրապետութիւններու փոխադարձ համաձայնութեամբ որ պէտք է վաւերացուի Սովետ Միութեան կողմէ»:

Չորեքշաբթի, Յունիս 15.– Հայաստանի Օրէնսդրական Մարմինը միաձայնութեամբ «Ատրպէյճանի մէկ մասը իրեն կցելու ի նպաստ քուէարկեց:»

Այսպէս՝ ազգային դառն վէճ մը վերածուեցաւ սահմանադրական հարցի մը՝ որ Սովետ կեդրոնական կառավարութիւնը պարտի լուծել:

Մոսկուայի մէջ մի քանի հարիւրաւոր հայեր ոգեւորուած ծափահարեցին՝ երբ Մոսկուայի հայ եկեղեցւոյ ներկայացուցիչ Տիրան Կիւրեղեան յայտնեց թէ «Հայաստանի մէջ Լղիմը կցելու ի նպաստ քուէարկութիւնը կատարուեցաւ միաձայնութեամբ» բոլոր (340 երեսփոխաններուն ձայներով):

Կիւրեղեան աւելցուց թէ «Հայերը պէտք է սպասեն Քրեմլինի որոշումը:» «Ժողովուրդը միացած է իր զգացումներուն մէջ, բոլորս կը սպասենք արդար որոշում մը» արտայայտութեամբ:

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ

(ՇԱՐ. 9-ՐԴ ԷՋԷՆ)

գերազանցող այլ թունաւոր գազերից, որ իր սպառնալի գոյութիւնն է շարունակում Երեւանից ոչ հեռու, երկրաշարժային գօտում, խմելու ջրի աւազանի վրայ կառուցուած ատոմային էլեքտրակայանը:

Այս ամէնի հանրագումարն էր Երեւանի օրեր տեւած ցոյցի մասնակիցների հոգում, որն է'լ պոռթկաց Ղարաբաղի առիթով եւ որին «Զգացմունքներ ու ողջմտութիւն» յօդուածի վերակառուցմանը հակառակ ընթացող հեղինակներն իրենց կարծրամտութեամբ այլ բնութագիր տալ չկարողացան, քան՝ «հակասոցիալիստական գարշահոտ» վերագրելը: Եւ դա այն դէպքում, երբ իր Հարաւսլաւիա կատարած այցելութեան ժամանակ Մ. Ս. Գորպաչովը յայտարարեց, որ բողոքումները Լեռնային Ղարաբաղի շուրջը հակասոցիալիստական-հակախորհրդային բնոյթ չեն կրում եւ որ «խօսքն այդ շրջանում մշակութային, ներազգային հարցերի գոյութեան մասին է»:

Պէտք էր զուրկ լինել տարրական նրբանկատութիւնից, դոյզն իսկ քաղաքավարութիւնից, ուրիշ ժողովրդի հանդէպ յարգանքի զգացումից, որպէսզի Երեւանի հրապարակներում ու փողոցներում հաւաքուած 700 հազար հոգու բնազդական ինքնակազմակերպուածութիւնը, զսպուածութիւնը, ինքնատիրապետումը, ժամերով ոտքի վրայ կանգնած մարդկանց հաց ու ջրով, իսկ ուժասպառ տարեքաւորներին շտապ օգնութեամբ ապահովելու պատրաստակամութիւնը, հայրենակիցների համերաշխութեան այդ անսահման արտայայտութիւնը ծաղրի ենթարկել, ծանակել՝ մեղադրելով մեզ նախօրօք «կազմակերպած կազմակերպուածութեան», ամխումբեր, նոյնիսկ, տարիներ առաջ ստեղծած կոմիտէների եւ, Աստուած գիտէ, էլ ինչ անդրովկիանոսեան գործակալների հետ կապերի մէջ: Եւ ահա այդ ամբողջը, ժողովրդի ոգու այդ վսեմ արտայայտութիւնը ցինիկաբար համարուեց «փողոցային դեմոկրատիա»:

Այդ դէպքում ինչպէ՞ս անուանել պաղեստինցիների կամ իռլանդացիների ամէն-օր հերոսատեսութեամբ ցուցադրուող եւ մեր հաւանութեանն արժանացող ցոյցերը: Նոյնպէ՞ս «փողոցային դեմոկրատիա»:

«ՂԱՐԱԲԱՂԻ ԿՈՄԻՏԷՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԱԾ ԷԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՐՔՈՎ ԵՒ ԻՐԵՆՔ ԷԼ ԻՐԵՆՑ ՀԵՐԹԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԷԻՆ ԱՅԴ ՏԱՐԵՐՔԸ»

Իսկ ինչ վերաբերում է «Ղարաբաղ» կոմիտէներին, ապա դրանք կեանք էին կոչուած, կազմակերպուած էին ժողովրդական տարերքով եւ իրենք էլ իրենց հերթին կազմակերպում էին այդ տարերքը: Դա փոխադարձ կապ էր՝ մէկը միւսին սնող, եւ այդ կապի շնորհիւ բազմահազարանոց հանրաժողովների ու երթերի ժամանակ ոչ-մի ճիւղ չկոտրուեց, ոչ-մի կոպիտ բառ չարտասանուեց, չարձանագրուեց նաեւ հասարակական կարգի խախտման ոչ-մէկ փաստ:

Այս «Ղարաբաղ» կոմիտէները վերակառուցման օրօք այդքան յաճախ հաղովուող նոր մտածելակերպի ու զանգուածների հասարակական ակտիւութեան արտայայտութիւնն էին եւ չնայած վերակառուցմանը հակադիր ուժերը վարկաբեկեցին ու պաշտօնապես կազմալուծեցին դրանք, սակայն յիշեալ կոմիտէները կը մնան՝ որպէս ժողովրդավարման առաջին օրինակներ, նրանք հասարակութեան մէջ հետք կը թողնեն ու կը շարունակեն մարդկանց հոգեբանութիւնը վերափոխող իրենց ազդեցութիւնը:

Միայն որոշակի նպատակներ հետապնդող չինովնիկներն ու նրանց մանկլաւիկները կարող էին կշիռքի մի նժարին դնել մարդասպան-ջարդարարներին, հարցերը Սումկայիթով լուծողներին եւ միւսին՝ մեզ, Երեւանում ու Ղարաբաղում խաղաղ ցոյցի դուրս եկածներիս, ընդ որում, յատուկ նախազգուշացումներով խնայել առաջիններին եւ մամուլում ու հեռուստատեսութեամբ մշտական նուաստացման ենթարկել նրանց, ովքեր արիւնահեղութեանն ու սպանդին իւրովի պատասխանեցին, ինչպէս վայել է կենսունակութեան եւ չարին դիմակայելու սեփական չափանիշներն ունեցող ժողովրդին. նրանց, ովքեր Մարտի 8ին գնում էին Ծիծեռնակաբերդ, դէպի Եղեռնի զոհերի յուշարձանը, ժողովրդական իմաստուն բնազդով, որ Սումկայիթը 1915 թուի Ապրիլ 24ի շարունակութիւնն է: Քայլում էին հազարաւոր կանայք, երեխաներ, յետոյ նաեւ տղամարդիկ՝ իրենց գլուխը խոնարհելու նոր զոհերի յիշատակին. համեստ բանուորական ընտանիքների՝ կոտորուած իրենց բնակարաններում, սեղանի շուրջը, հեռուստացոյցի առաջ, անարգուած կանանց ու աղջիկների, նրանց պաշտպան կանգնած

(ՇԱՐ.Ը 12-ՐԴ ԷՋ)

ՈՒՐԱՐԻ ՏԸՒՉՈՒԹԻՒՆ ՎԻՍԵՆԹԷ ԼՈՓԵՍԻ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՄԷՋ

Ի գիտութիւն հաւատացեալ ժողովրդեան՝ ուրախութիւնն ունինք ծանուցանելու, թէ Կիրակի, Յունիսի 26-ին, Ս. Գէորգ Եկեղեցւոյ մէջ, ի ժամ Ս. Պատարագի, Թեմիս Առաջնորդ Գերաշնորհ Տ. Գրիգորիս Ս. Եպս. Բունիաթեան ՈՒՐԱՐ ԿՐԵԼՈՒ իրաւունք պիտի շնորհէ դպիրներ Թադէոս Կ. Թադէոսեանի եւ Րաֆֆի Գ. Էսուէֆուրեանի:

Թադէոս Թադէոսեան դպրութեան չորս աստիճանները ստացած է 21 Մարտ 1949ին, Մարսէյլի Ս. Թադէոս Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Հոգելոյս Արտաւազդ Արքեպս. Սիւրմէյեանի: Իսկ Րաֆֆի Էսուէֆուրեան՝ մեր եկեղեցւոյ մէջ, ձեռամբ Գերշ. Տ. Գրիգորիս Ս. Եպս. Բունիաթեանի:

Կը հրաւիրենք բարեպաշտ ժողովուրդը հոգեպարար այս արարողութեան:

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ
ՎԻՍԵՆԹԷ ԼՈՓԵՍԻ Ս. ԳԷՈՐԳ ԵԿԵՂԵՑՒՈՅ

ՍԻՎՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ

(ՇԱՐ. 11-ՐԴ ԷՋԷՆ)



սպանուած լուսադէմ զինուորների, նաեւ այն ստրպէյճանցիների յիշատակին, որոնք հաւատարիմ մնացին մարդ կոչուելու վեմ պատին ու իրենց կեանքի գնով փորձեցին փրկել հարեւան-հայերին: Դեռ երկար մեր յիշողութեան մէջ կը մնան նըրանց քայլերը, ովքեր լուռ, ինքնամփոփ բարձրանում էին բլուր տանող ոլորան ճանապարհովը: Այդ քայլերի արձագանգը համաժողովրդական վիշտն ու բողոքն էին, անօրէնութիւնն առնականութեան վերածելու վարերով փորձուած իմաստութիւնը: յուսահատութեան մէջ ուժ գտնելը, անարդարութեան օդակից դուրս պրծնել կարողանալը դէպի վեհ Արդարութիւն:

Համամիութենական մասուլը, հեռուստատեսութիւնն ու ռադիոն պետերը խուլ ու համր գտնուեցին այդ քայլերի արձագանգների հանդէպ եւ փառք Աստծոյ, մենք երախտապարտ ենք դրա համար, քանզի մեր ժողովրդի վշտի ու սուգի իր նմանը չունեցող արտայայտութիւնը նրանք կարող էին նոյն կերպ պղծել, ինչպէս պղծեցին այն ամէնն՝ ինչ իսկական ժողովրդավարութիւնը եւ հրապարակայնութիւնը օժտուած ազնիւ հասարակութեան մէջ կ'ընկալուէր, որպէս հոգու եւ ոգու խոզախում:

Այդ պաշտօնաւոր լրտեսների համար առաւել մատչելի, անկեղծ աւելի, աւելի ճեղընտու կը լինէր լսել, ինչպէս Մարտի 19ին կինոյի Տանը կայացած ժողովին երկու-եռբեք տաքացած երիտասարդներ, անվերջ վիրաւորանքներից ու ծանակումից ինքնատիրապետումը կորցրած, կոչ էին անում սումկայիթեան ջարդի գործը յանձնել միջազգային դատարանին, քանի որ խորհրդային կառավարութիւնը թաքցնում է դրա իրական չափերը, Ղարաբաղի խնդիրը լուծելու դէպքում՝ Հայաստանը յայտարարել «անկուսակցական հանրապետութիւն», առաջարկում էին նաեւ ուրիշ յուսահատ քայլեր:

Ես կարող եմ պետական անվրտանգութեան գործին այդքան նուիրուած խմբագրութիւններին ծրիւքաւր տրամադրել է՛լ աւելի ծանրակշիռ, յատուկ «դոսիէ»ի սազական, այդ՝ նոյն բնոյթի տեղեկութիւններ:

«ՀԱՊԱ ԻՆՉ ԵՐԵՍՈՎ ԵՆՔ ՆԱՅԵԼՈՒ ԱՐԱՐԱՏԻՆ»...

1988 թուականի Մարտի 23ին մենք բոլոր, թէ՛ Հայաստանում եւ թէ Ղարաբաղում, ոչ–թէ խմբուած (ահա արդէն 2 ամիս է մեզանից ոչ–ոք չի կարողանում տանը մենակ մնալ), չունէինք պահած ըսպասում էինք Գերագոյն Խորհրդի Նախագահութեան որոշմանը՝ ուրախալի լուրն առնելու յոյսով: Ես նոյնպէս գտնւում էի ծանօթներից մէկի տանը: Երբ «ժամանակ» ծրագրի խօսնակը դժնդակ ձայնով յայտարարեց նախագահութեան վճիռը՝ ամէն բան թողնել ինչպէս որ է, առաւել եւս, երբ հանրապետութիւնների ղեկավարները դատապաղական տոնով սկսեցին մատ թափահարել առանց այդ էլ մի անկիւնում կծկուած որբուկ–Հայաստանի վրայ, որը յանկարծ համարձակուել էր չհնազանդուել, բոլորիս գըլխին, ասես, սառը խուրը լըցրեցին:

Ցաւացածութեան մի–քանի վայրկեանից յետոյ զայրոյթի ձայները պայթեցին: Ամէնից առաւել վրդովուած էր երիտասարդութիւնը:

Տանտիրուհու դուստրը՝ մասնագիտութեամբ արուեստագէտ, փերուն մի աղջիկ, յուզմունքից դողացող ձայնով բացագանչեց. «Եթէ այդպէս է, ես էլ զէնք կը ձարեմ, ես էլ կը սովորեմ երեխաներ մորթել. երեւում է՝ մարդասպանների հետ աւելի՛ են հաշուի նստում քան մեզ նմանների»: Տղաներից մէկը նրան ընդհատեց. «Եկէք դիմենք Թուրքիային,ասենք որ Ռուսաստանի հանդէպ հակառուծութեան համար մեզանչում ենք, որ մենք այսուհետ...»

Ինչ–որ մէկը թոյլ չտուեց նրան խօսքն ասրտել: «Հապա ի՞նչ երեսով ենք նայելու Արարատին»: Բոլորն ասես միանգամից սթափուեցին, ուշքի եկան, մի քանիսի աչքերին արցունքներ յայտնըւեցին, յուսահատութեան եւ անելանելիութեան արցունքներ: «Ոչ, դա լինելու բան չէ. աւելի լաւ է դիմենք Գանատային, Աւստրալիային, խնդրենք մեզ մի հողակտոր տրամադրել եւ ողջ ժողովրդով տեղափոխուենք այնտեղ: Տեսնում ենք որ այստեղ մեզ կամենում են կոխկռտել որպէս ազգի՝ մինչեւ վերջ»:

Այնուհետեւ հնչեց էլի մի տնքացող ձայն. «Լաւ, տեղափոխուենք, բայց ո՞ւր ենք թողնելու մեր տաճարները, մեր խաչքարերը, մեր երեւանը»:

Դուք կարո՞ղ էք պատկերացնել, յարգելի Սերգէեւիչ, Վիաչեսլաւ Վսեվոլոդովիչ, Վենիամին Ալեքսանդրովիչ, Միխայիլ Ալեքսանդրովիչ, որ այդ «Լաւ տեղափոխուենք...» բառերն ինձ էին պատկանում, այո հենց՝ ինձ...:

Ահա թէ ինչպիսի բառեր է ստիպում արտասանել անելանելիութեան պահը, ստիպում է ապստամբել սեփական անձի, սեփական էութեան, դարերի դէմ...:

Նկարագրեցի մեր հակազդեցութիւնը Գերագոյն խորհրդի որոշմանը եւ մտածեցի յանկարծ այս արտայայտութիւններն ընկնեն տարբեր «օվչարենկոների» ձեռքը: Չէ, ես չեմ վախենում, թէ այդ բառերը կը վերագրուեն Օժեգովի բառարանով ստեղծած «Հրահրմանը», այսպէս կոչուած, «արեւմտեան ռադիոձայների» կողմից եւ կամ տաք–տաք վկայութիւններ կը դառնան մի նոր, ջախջախիչ յօդուածի համար: Վախենում եմ նրանից, թէ՝ ինչպիսի քմծիծաղով են ընդունելու եւ ինչ հնաոճ զգացմունքայնութիւն համարելու «Ո՞ւմ ենք թողնելու մեր տաճարները, մեր խաչքարերը, մեր Երեւանը», «Հապա, ի՞նչ երեսով ենք նայելու Արարատին» խօսքերը: Բայց դա ինչո՞ւ, այդ ի՞նչ ցուցմունքի համաձայն ես պարտ եմ մտածելու, թէ մեր բառերն ինչպէ՞ս կ'արձագանգեն նրանց գլխում: Ո՞վ է իրաւունք տուել նրանց, այդ նորայայտ թուղթ–մրոտող կամակատարներին իրենց գրիչները սրաչեղբի տեղ թափահարելու անտիկ ժամանակներից մեր օրերը հասած ժողովրդի վրայ, որը սովոր է իր խղճի ու գործերը միայն իր սրբազան լեռան գագաթին ներկայացնել եւ, ո՞վ է դրանց թոյլ տուել այդ ամէնէն անել սոցիալիզմի, վերակառուցման, ժողովրդավարութեան, Լենինի անունից, որն իր վերջին գրառումներուն պատուիրում է նրբանկատ ու զգոյշ գտնուել փոքրաթիւ ժողովուրդների ազգային զգացմունքների նկատմամբ:

«ՄԵՐ (ՀԱՅԱՍՏԱՆԻ) ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՈՉ–ԽԵԼԱՑԻ ԶԳՈՒՇԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ ՎՆԱՍ Է ՀԱՍՑՆՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԻՍԿԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԵԱՆԸ»

Թանկագին բարեկամներ,

Այս օրերին մենք բազմաթիւ նամակներ ենք ստանում տարբեր ազգութիւնների մեր բարեկամներից, որոնք իրենց աջակցութիւնն ու մասնակցութիւնն են արտայայտում. Մխայիլ Գիւղինից, Վալենտին Ռասպուտինից, Անդրէյ Բիտովից, Մխայիլ Մառուսովսկուց, Ֆազիլ Իսկանդերից, Ստանիսլաւ Ռասսադինից, Մխայիլ Լոմանից, նից, Մխայիլ Լոմանից, Կրուպնիկից եւ շատ ուրիշ յայտնի ու անյայտ մարդկանցից: Հայաստանի «Յոլերը», չգիտես, վախենալով երկրովմէկ ճառացող իրենց բազկաթոռները կորցնելուց թէ՞ որպէսզի «կրքոր չթորբոքեն», արգելում են հրապարակել այդ նամակները: Ես գտնում եմ, որ մեր ղեկավարների ոչխելացի զգուշաւորութիւնը վնաս է հասցնում ժողովուրդների իսկական բարեկամութեանը: Չէ՞ որ այսօր իրեն այդքան միայնակ զգացող մեր ժողովրդին հեռագրերի ու նամակների հրապարակումը կ'օգնէր աւելի թեթեւ շնչելու:

Մեր անկեղծութեանն ու դիւրահաւատութեանը, մի անպատշաճ դաժանութեամբ տրուած՝ պատասխանի արդիւնքը հանդիսացող այս դասը հասունութիւնը չատերիս ոչ–միայն կը հրի դէպի հոգեկան ընդլայնում, ներքին յուսահատութիւն եւ օտարացում, ներքին գաղթ, այլեւ ադեկտիւի չափերով կ'արագացնի արտագաղթը դէպի Ամերիկա: Իսկ մեզանից նրանք, ովքեր ամենայն խստութեամբ դատապարտում էին հայրենիքը լքողներին, արդ ոչ–մի բառով չեն կարողանայ կանգնեցնել նրանց: Ինչի՞ համար պարտադրել մարդկանց այսուհետեւ էլ ջարդուփշուր լինել, ամենափոքր չափով իսկ վերակառուցելու յոյս ներշնչող բիւրակրատական մեքենայի անիւների տակ: Չէ՞ որ ամէն–մէկը չէ, որ համաձայն է յանուն գաղափարի պահպանել Հայրենիքը, դառնալ հայրենի յուշարձանների Զուարթնոցի, Էջմիածնի պահակը, երեխաներին մեծացնել քլորոպրէնի թունաւորուած երկնքի ներքոյ, գաղակներին ենթարկել, իւրաքանչիւր պահ պայքել սպառնացող, աթոռակալնի մասհաբեր ճառագայթահարմանը:

Աւա՛ղ, այս ներքին ու արտաքին գաղթին չես դիմակալի ո՛չ «Ղարաբաղ» կոմիտէների կազմալուծմամբ, ո՛չ շրջկոմների ու քաղկոմների սկսած հետապնդումներով, ո՛չ Երեւանի վրայ պատուող ահեղաշունչ ռազմական ուղղաթիռների ղղրդիւնով, որոնց ժողովուրդը դառն հեգնանքով անուանեց «վերակառուցման» ծիծեռնակներ, ո՛չ երեւանեան հրապարակներն ու փողոցները ռուս բարեհաւ զինուորական լցնելով, ու, ի դէպ, մենք 300 տարի սպասել էինք, եւ ում մեր աղջիկները հին սովորութեամբ ծաղիկներ էին նուիրում...

«ԼԱՑՆԱՏԱՐԱԾ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻՑ ԱՌԱՒԻԼ՝ ՂԱՐԱԲԱՂՑԻՆԵՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՋԱՑ ՇՆՉԵԼՈՒՆ ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆ, ՄԱՐԴՈՒ ԳՈՑՈՒԹԵԱՆ ՎԱՅԵԼ...»

Սակայն մի կողմ թողնենք Երեւանի թատերական (օպերային) հրապարակը եւ տեղափոխուենք Ղարաբաղ, որն ընդգրկած դրամայի խակական թատերաբեմը եւ որտեղ, ինչպէս ընդունում է Մոսկուայի Խորհրդային Մշակոյթի Նախարարների Խորհրդի ճիշդ՝ մարզի սոցիալ–տնտեսական, մշակութային վերափոխումների մասին:

Հետեւաբար, որոշման ազդեցութեան տակ իրենց ստորագրութիւնները դրած՝ յարգարժան ընկերներ Մ. Ս. Կորպաչովն ու Ն. Ի. Ռիժկովը զարմացած են, Լեռնային Ղարաբաղի բնակիչներին չեն ուրախացնում այդ որոշման մէջ տեղ գտած բաւական չոչոլ խոստումները եւ նրանք չարունակում են [illegible] նրանցը պնդել՝ պահանջելով անյապաղ Ատրպէյճան:

Ես անչափ կ'ուզէի, որ ինձ դուք՝ «Իզվեստիայի» տպագրուած յօդուածի յուլի հեղինակներ, դնէք «Ղարաբաղի դէպքերը գործած տեսաժապաւէնները: Այդ ժապաւէններում զարանք են պատճառում դրանք Ղարաբաղին սահմանակից Ադրբեջանի շրջանի առրպէյճանցիների կողմից ջարդուփշրուած մեքենաների ու կծրանների, նոյնիսկ, որ կանգնած հիւանդանոցների վիրակապուած ու գիպսապատած հայերի աղեկտուր փաղգուռ տեսքը, այլ Սահակեանների քառանկիւն վարպարակում հաւաքուածների վիճակը: Մարդը, եթէ նա կրծքում սիրտ է բարախում, այլ ոչ «ապարատիկին» բրոշ ապարատ, չի կարող [illegible] այդ մարդկանց, որոնք քառանկիւնի վանդակի ընկած պատառոտուող արեամբ կլսում են երկաթեայ ձայնը անընդմէջ վանկարկուող «Հա–յաս–տան, Ար–մե–նիա»: Այդ հպարտ, ղարերով կըզնուած, իրենց քաղաքակրթական փառաբանած ղարերը ները, որոնք երկրին ծ [illegible] շալ, 20 Խորհրդային Միութեան Հերոս, 44 հազար [illegible] րենական Մեծ Պատերազմի (Շուշ Ազիարամեանի) [illegible] նուկը են տուել, մեր [illegible] րում հասկացել են նաեւ

(ՇԱՐ.Ը 13-ՐԴ)

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ

(ՇԱՐ. 12-ՐԴ ԷՋԷՆ)

ակից... Եւ ահա նրանց Հայաստանի փոխարէն մատուցում են «հասարակական-տնտեսական վերափոխումներ», այն էլ դրանց ներդրումներ՝ յանձնարարելով Արտպէյճանի այլեւայլ նախարարութիւններին ու հաստատութիւններին: Ղարաբաղցիներին՝ քաղ յայտնի է նման վերափոխումների գինը: Չէ՞ որ արդէն քանիերորդ անգամ թղթի վրայ այդքան գեղեցիկ, դրախտային կեանք սուլող ոռոշումները նման «ներդրողների» խորամանկ ձեռքերով տիւղ հակառակ արդիւնքն են տուել. միլոց են ծառայել մարդի է՛լ աւելի արդիւնաւէտ ատրպէյճանացման համար:

Շնորհակալութիւն կուսակցութեանն ու կառավարութեանը՝ նոր դպրոցների բացման, բնակատարածութիւնների ընդլայնման, նոր ճանապարհների անցկացման համար, սակայն Ղարաբաղում առանց այդ էլ նոր բնակարանների կարիք չեն զգում, քանի որ, նախ, բնակութեան բնական ազգութիւն չունի եւ, ամենակարեւորը, բազմաթիւ ղարաբաղցիներ, չդիմանալով ազգային ու քաղաքական հալածանքին, լքել են իրենց տները ու դիմել աւար վայրեր:

Նախատարած բնակարանների առաւել՝ ղարաբաղցիներին անհրաժեշտ է ազատ չնկող ապառնութիւն՝ մարդու ջոյութեանը վայել: Թէկուզ եւ առատ ու կուշտ, մէկ է՝ սնունդը նրանք չեն կամենում ընդունել վանդակաճաղերի միջով: Նրանց պէտք չէ ղաղար – թող նոյնիսկ 400 միլիոն – այն ձեռքերից, որոնք նախերը սրելով պատրաստ են մերկել նրանց սիրտը, եթէ Մոսկուան թէկուզ մի պահ մոռի իր հանդարտեցնող, զգօն հայեացքը:

«ՂԱՐԱԲաՂՑիՆԵՐը ԳիՏԵՆ ՈՐ ԲԱԳիՒՈՒՄ ՆՍՏԱԾ ԴԱՏԱԽԱԶՆԵՐը ՀԱԾՈՒԵՑԱՐԴԱՐ ԿԸ ՏԵՍՆԵՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՈՂՋ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՀԵՏ, ԱՅԴ ԱՆՀՆԱԶԱՆԴ ՍՊԱՐՏԱԿՆԵՐի, ՈՐՈՆՔ ՅԱՆԴԳՆԵՑԻՆ ԱՊՍՏԱՄԲԵԼ ԺԱՄԱՆԱԿԱԿից «ԿՐԱՍՆԵՐի» ԱԼիԵԻՆԵՐի ՈՒ ԲԱՂիՐՈՎՆԵՐի ԴԷՄ...»

Նրանք գիտեն, որ չուտով, չատ չուտով, գործի դնելով Մորրդային Միութեան Գերագոյն Սորդրդի Որոշման՝ կարգ խախտողներին պատասխանատուութեան կոչելու կէտը, իրականացնելով «Բակինակի Ռաբոչի» թերթի ըստ պատուիրքերը՝ «Ղարաբաղի Ազգ-ժողովներ» մեղաւորներին խստիւ պատժելու մասին, Պաքւում նստած գլխաւոր եւ ոչ-գլխաւոր դատախազներն ու իրենց նմանակները, եղբայրական բարեկամութեան պատառներով ծածկուած, մոլագար արբանքով հաշուեյարդար կը տեսնեն «Կուռնկ» կոմիտէի անդամների հետ, Ղարաբաղի ողջ հայութեան հետ, այդ անհրնազանդ սպարտակների, որոնք յանդգնեցին ապստամբել ժամանակակից «կրասնների»՝ Ալիեւների ու Բաղիրովների դէմ...

Եւ Սումկայիթի դէպքերը խայտառակ լուսեթամբ պարուրելու հետ մէկտեղ՝ յանգատորուած ու արձակ ներքողներով որոտաձայն գովերգուած, առասպելի վերածուած Խուրիման Աբասովան, որն իր տոհմական սովորութեան համաձայն՝ գլխարոն է նետել հայերի վրայ յարձակուած աղջամղջ-ջարդարարներին կանգնեցնելու համար, հազիւ թէ այդ հաշուեյարդարի ժամանակ կը կարողանայ խելքի բերել վրէժի ծարաւի պետական այրերին...

Ահա թէ ինչու են երկաթճաղերին զարկւում ղարաբաղցիները, ինչու են այդպիսի յամառութեամբ ձգտում միանալ իրենց հարազատ ժողովրդին: Եւ պէտք է ոչ-միայն հոգեպէս, այլ նաեւ քաղաքականապէս կոյր լինել, որպէսզի երեխայի՝ իր մօրը մեկնած ձեռքերը եւ մօտ ձրգտումը՝ դէպի հարազատ զաւակը կոչել «տարածքային յանկնութիւններ» կամ, ինչպէս ատրպէյճանցի 250 գիտնականներն, ակադեմիկոս Վլքթոր Համբարձումեանին ուղղած, իրենց հեռագրում են արտայայտուել, «Ատրպէյճանի կարկանդակից համեղ պատառ պոկելու» ցանկութեան:

Ատծոյ սիրոյն, մեզ պէտք չէ այդ «համեղ պատառը»: Մենք վարժուել ենք ապրելու 30 հազար քառակուսի քմ-ից պակաս քարքարոտ հողի վրայ, սակայն ազնուաբար ու վեհանձնօրէն ապրելու, այնպէս որ Ղարաբաղի 4-5 հազար քառակուսի քիլոմեթրը միացնելով՝ մեւնոյնն է Ձինաստան չենք դառնալու:

Մենք այնպէս ենք յոգնել եւ հիմա մեր շուրջ ամէն-բան այնքան անիմաստ է թւում, բացի այդ մեր արժանապատուութիւնից ցածր ենք համարում համալսարհային գիտութեամբ հաստատուած պատմական ճշմարտութիւններն ապացուցելու համար վէճի մէջ մտնել, որ հաւատացէք, յարգելի հասցէատէրեր, անսահման երախտապարտ կը լինէինք բոլոր նրանց, ովքեր ոչ-թէ նենգապատնէշքով (չանթաժ), հալածանքներով, անպատկառօրէն, այլ հանգիստ գիտականօրէն հիմնուրուած փաստերով, հաւաստիաբար կ'ապացուցեն մեզ, թէ Ղարաբաղը երբեք զուտ հայկական տարածք չի եղել, թէ հայկական գրերը յղացող Մեսրոպ Մաշտոցը դեռ 5րդ դարում Արցախ անուանեալ Ղարաբաղում չի հիմնել առաջին հայկական դպրոցները, 13րդ դարի հայկական ճարտարապետութեան գլուխգործոց Գանձասարի վանքն ու Ղարաբաղի համալսարհային ամենատարբեր գիտական հետազոտութիւններում, ալբոմներում ու հանրագիտարաններում տեղ գտած, հարիւրաւոր յուշարձանները ու խաչքարերը ոչ-թէ հայերն են ստեղծել, այլ՝ աղուանցի-ալբոպէյճանցիները, որ մեզ իրենց ականաւոր աչխատութիւնները հայոց լեզուով ժառանգած՝ պատմագիրներ կիրակոս Գանձակեցին, Մովսէս Կաղանկատուացին, Մխիթար Գօշը, եւ, անգամ, հայկական այբուբենի տառերով ակրոստիքոս կերտած Դաւիթ Քերթողը, Նոյնպէս, աղուանցի-ատրպէյճանցիներ են եւ թէ, իբր, հրով ու սրով Ղարաբաղ խուժած ու աղուանական մշակութային արժէքները ոչնչացրած բարբարոս-հայերն այրել են վերոյիշեալ պատմիչների ստեղծագործութիւնների բնագրերը՝ նախօրօք թարգմանելով դրանք հայերէնի...:

Ես ուզում եմ ամբողջութեամբ մէջբերել Նովոսիբիրսկից ստացուած հեռագրի տեքստը. «Մարտի 26ին մեր մանկավարժական ինստիտուտում հանդիպում կայացաւ ղրղնաւարտ-բանասէրների հետ: Դրանք Նովոսիբիրսկի մարզի գիւղերի ու քաղաքների ուսուցիչներն են: Նրանց պատուիրեցին իրենց հիացմունքը յայտնել Ձեր անձնատրութեամբ: Սրտի ցաւով իմացանք Լեռնային Ղարաբաղի իրադարձութիւնների մասին: Որոշակիօրէն գիտակցում ենք մեր պատասխանատուութիւն այն ամէնի համար՝ ինչ կատարւում է մեր երկրում: Երեւակայել չենք կարող Խորհրդային Միութիւնն առանց եղբայրական հայ ժողովրդի, որի դարաւոր մշակոյթը խորհրդային բազմազգ մշակոյթի անբաժանելի մասն է կազմում: Մեր անձնական հարատութեան մասը: Մաղթում ենք ողջ հայ ժողովրդին համբերութիւն, առնականութիւն տոկունութիւն, ինքնատիրապետում: Մենք հաւատում ենք լաւագոյն ելքին, ողղմտութեանը: Հաւատում ենք մշակոյթին, որի կենսահաստատ ճայնը պէտք է լսուի: Մենք յաւերժ Ձեզ հետ ենք: Ուսանողների, ուսուցիչների, դասախօսների յանձնարարութեամբ՝ Էլվիրա Գորիուխինա»:

Անհնար է առանց յուզմունքի ընթերցել այս տողերը, միաժամանակ անկարելի է չնկատել հետեւեալ, յայտնի չէ՝ ինչպիսի հերթական ապատկոմմորոշման արդիւնքր հանդիսացող սրտաճմլիկ արտայայտութիւնը. «Զենք կարող պատկերացնել Խորհրդային Միութիւնն առանց եղբայրական հայ ժողովրդի»: Մի անհանգստացէք, սիրելի Նովոսիբիրցիներ, մենք դուրս չենք գայ Խորհրդային Միութեան կազմից, մանաւանդ որ գնայու տեղ չունենք, մեր թիկունքում Թուրքիան է, իր ատամների կրճտոցը չըթաքցնող Թուրքիան:

«ԹՈՒՐՔՆ ԻՆՔՆ ԱՆԻՕՈՒԱԾ Է, ԲԱՑԻ ՆՐԱՆ ԽՕԱՔՆ՝ ՕՐՀՆՈՒԱԾ»

Մենք երեք դար չարունակ մեր հայեացքը սեւեռել ենք դէպի հիւսիս, դէպի Ռուսաստան, նայել ենք փրկութեան յոյսով, սիրով ու հաւատարմութեամբ: Մինչդեռ, ըստ երեւոյթին, քաղաքականութիւնը սիրոյ հետ աւելի պահկաս է հաշուի նստում, քան՝ առելութեան:

Պատահական չէ, որ Մարտ ամսի «Հուրիյէթ» թուրքական լրագիրը «Խորհրդային մարդկն ու ազգայնամոլութիւնը» յոդուածում, Ղարաբաղի դէպքերը մեկնաբանելով, գրում է. «...Խորհրդային ատրպէյճանցիների համեմատ՝ խորհրդային հայերն առաւել մեծ պատրաստակամութեամբ են իրենց անձը զոհել յանուն կոմունիզմի: Սակայն Քրեմլինը, հայերի եւ ատրպէյճանցիների միջեւ տեղի ունեցածն ուսումնասիրելիս, հաշուի է առել ոչ-միայն թուրք-ազերիների, այլեւ՝ բոլոր թուրքերի կշիռը: Իրօք, Խորհրդային Միութիւնում թուրքերի թիւը հասնում է 50 (յիսուն) միլիոնի: Թուրքական այս վիթխարի զանգուածի դէմ յանդիման, ինչպիսին էլ լինի հայերի արժէքը կոմունիզմի աչքում, Քրեմլինի հաշիւներում այն չի կարող թուրքերի արժէքը ունենալ»: Մեզ՝ հայերիս մնում է լինել հին հայկական ասացուածքը. «Թուրքն ինքն անիծուած է, բայց նրա խօսքն՝ օրհնուած»:

Եթէ, իսկապես, «Հուրիյէթ» թերթի ինքնագոհ եզրակացութիւնները ճշմարտացի են, յամենայն դէպս կ'ուզենայինք հասկանալ՝ որքանո՞վ է քաղաքականութիւն կոչուած գործօնին ձեռնտու մոռանալ, որ ցարական կառավարութիւնը միշտ ձգտում էլ իր հարաւային սահմանները բնակեցնել հայերով, իմանալով վերջիններիս աներկբայ նուիրաւածութիւնը Ռուսաստանին, իսկ այժմ ապշեցուցիչ անհետաքրքրութեամբ ոչ միայն չի անհանգստանում հայ բնակչութեան նօսրանալով այդ շրջաններում, այլեւ՝ նպաստում է հայերի ասուցմանն ու օտարացմանը Ռուսաստանի նկատմամբ: Միմչ° Հունգարիայի, Չեխոսլովաքիայի, Լեհաստանի դէպքերից եւ պրեժնեւեան մի շարք ուրիշ անմիտ քայլերից յետոյ, ուսանների հանդէպ ամող անբարեացակամութեան առկայութեամբ, այդչափ անկական է նաեւ հայերի անմնուկր այդքերում անվստահութեան բոստուերներ ծնելը...

Այստեղ կ'ուզէի մի քանի տող մէջ բերել մեզ ուժ հաղորդած մէկ այլ նամակից, որը Մոսկուայից մեզ յղել է ազգահոգեբան (էտնոպսիխոլոգ), պատմական գիտութիւնների թեկնածու Գալինա Ստարովոյտովան. «Ամէն-մէկիս բախտ չի վիճակում ականատես լինել այն բանին, թէ՝ ինչպէս է ժողովուրդը կանգնում իր Պատմութեանը դէմ առ դէմ: Հետագայում, ինչպիսի ընթացք էլ ունենան իրադարձութիւնները՝ դրանք արդէն կայացել են, եւ ժողովուրդը դրանցից դուրս կը գայ ոչ այնպիսին՝ ինչպիսին նախկինում էր»:

«ԴԱՒՈՆ ՀԱՅՈՒՆՈՒԹիՒՆը ԿԸ ՍՏիՊԷ ՄԵՋ ԱՌԱՒԵԼ ՍԹԱՓ ԸՆԿԱԼԵԼ ԻՐԱԿԱՆՈՒԹիՒՆը, ՅԵՆՈՒԵԼ ԼՈՒ ՍԵՓԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ՈՒԺԵՐի ՎՐԱՅ, ՉՏՐՈՒԵԼ ՊԱՏՐԱՆՔԻՆ, ԱՊԱԳԱՅԻՆ ՄԵՐ ՏՈՒՆՆ ԱՒԱԶի ՎՐԱՅ ՉԿԱՌՈՒՑԵԼ»...

Արդարեւ, մարդկային ոգու հզօրութիւնը փորձող՝ երկարամեայ պայքարից յետոյ մենք «դուրս ելանք ոչ ամպիսին՝ ինչպիսին նախկինում էինք», ինչ-որ տեղ ուրիշ դարձանք, աւելի հասուն: Դառնութեամբ տրուեց մեզ այդ հասունութիւնը, մեծ հատուի վճուգման գնով, որոշ չափով 1905 թուականի Ցունուարի 9ը յիշեցնող՝ վճուգում:

Մենք՝ սկզբում Ղարաբաղի ժողովուրդը, յետոյ նաեւ՝ Հայաստանի, դիմեցինք դէպի Քremlնային Պալատ՝ Լենինի անուան հրապարակը Մոսկուայում եւ թատերական հրապարակը Երեւանում, համոզուած, որ կենտրոնական իշխանութիւնը կը հասկանայ մեզ ու կ'ընդառաջի: Մենք գնում էինք սոցիալիզմի երկրի, ռուս ժողովրդի, վերակառուցման նկատմամբ վըստահութիւն արտայայտող

(ՇԱՐ.Ը 14-ՐԴ ԷՋ)

ՍԻՎՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ

(ՇԱՐ. 13-ՐԴ ԷՋԻՑ)

ցուցապաստառներով: Խորհրդային Միութեան կոմկուսի կենտկոմի գլխաւոր քարտուղար Մ. Ս. Գորպաչովի մեծաթիւ նկարներով: Սակայն մեզ վրայ կրակ բացեցին: Կրակ բացեցին Հաղբիւրոյի եւ Գերագոյն Խորհրդի նախագահութեան վերոյիշեալ անարդար որոշումներով, զանգուածային տեղահանութեան մէջ ողջերի ծաւալած ստապատիր, արատաւորող քարոզչութեամբ՝ ստրպէյճանական կողմի նկատմամբ ակնյայտ բարացակամութեամբ: Կրակ բացեցին Սամկայիթով: Ովքե՞ր են դրանք՝ կրակողները, մենք չենք կարող հասկանալ, ասելի ճիշդ, չափազանց ծանր է հասկանալը: Միթէ՞, իրօք, 3 եւ 50 միլիոնի յարաբերութիւնը հաշւի առնող, հասարակական ու ազգային արդարութեանն ի սպառ օտար «գլոբալ» քաղաքագէտները: Կամ էլ ցարական կայսերապաշտութեան մենատիրական ձգտումները ժառանգած ժամանակակից, Լենինի բառերով առած, «ռուսական բիրտ ժանդարմները», որոնց նախ զարմացրեց, ապա զայրացրեց, իսկ յետոյ վախեցրեց, իր ակնկալիքներն այդքան միահամուռ արտայայտել յանդգնած սակաւաթիւ ժողովրդի խիզախումը: Եւ վերջապէս, գուցէ, վերահսկուման ճչամիսե՞րը, որոնք չտապեցին քաղաքական, բարոյական ու վարչական ճնշումներով խեղդել ժողովրդավարութեան ու հրապարակայնութեան հազիւ ծիլ տուած ընձիւղները, այն է՝ Ղարաբաղի մարզկոմի նիստ եւ կուսակցական լիաժողովի վճիռը, որը ժողովրդի ազատ կամքի պաշտօնական հաստատումն էր, այնուհետեւ զանազան ճչամիսներին պաշտպան կանգնած՝ երեւանեան ցոյցերը: Դրանով իսկ վերակառուցման հակառակորդները կամեցան, առաջին հերթին, դաս տալ Խորհրդային Միութեան բոլոր ժողովրդներին, միաժամանակ նաեւ ցոյց տալ՝ թէ ինչի կարող են յանգեցնել վերակառուցման հրապարակած ազատութիւնները... Այսպէս թէ այնպէս, խաղադրօքն փողոց հլածներիս վրայ, մեզ բարոյապէս գնդակահարող, կրակ բացեցին: Եւ մենք այլեւս Ցունուարի 8ի ժողովուրդը չենք, այլ՝ Ցունուարի 10ի, մէկ օրուայ մէջ հասուցնացած ժողովուրդը: Ես կ'ասէի, մեր ժողովրդին օգուտ կը տայ նման հասունութիւնը: Զէ, ասելի չուտ, հակառակին: Բայց նա, այդ դառն հասունութիւնը, կը ստիպէ մեզ առաւել սթափ ընկալել իրականութիւնը, չենուել լոկ սեփական ներքին ուժերի վրայ, մեր տոկունութեան վրայ, չտարուել պատրանքներին, ապագայի մեր տունն աւազի վրայ չկառուցել, կը ըստիպի կուրօրէն չհաւատալ ու հաւատից չկուրանալ, կը ըստիպի արտաքսմանի հայերին այսուհետեւ խորհրդային դեսպանատներին այդքան անշահախնդրօրէն ու նուիրաւածութեամբ չծառայել՝ դրանց ու Խորհրդային Միութեան չուրջը համախրանք ու բարեացակամութեան մշտական մթնոլորտ ստեղծելով, կը ստիպի նրանց առանձնապէս յոյսեր չկապել Խորհրդային Միութեան, Խորհրդային Հայաստանի հետ, յատկապէս, ինչ վերաբերում է հայկական հարցի վերջնական լուծմանը՝ կապուած Ցեղասպանութեան ճանաչման եւ Թուրքիայի նկատմամբ հողային պահանջների հետ, կը ստիպի սփիւռքահայութեանն ինքնուրոյն գործել, միտքը լարել՝ ազգի պահպանման նոր, առաւել վստահելի ուղիներ գտնելու համար:

«ԱՄԷՆՈՒՐԵՔ ՄԱՀ Է ՈՒ ԱՒԵՐԱԿ՝ ԱՍՏԵՂՈՎ ԹՈՒՐՔՆ Է ԱՆՑԵԼ»

Ես չեմ ուզում թուարկել նմանօրինակ անհեթեթութիւններ, միայն կը կրկնեմ, որ մենք այնչափ չնորհապարտ կը լինենք բոլոր նրանց, ովքեր կ'ապացուցեն այդ, ի դէպ խոստութիւն մեզ, յաւիտեանս անապացուցելին եւ մենք, հանդարտուած ու հաշտուած, անհոգ կ'ապրենք՝ առանց այդ ստորացուցիչ վէճերի ու հոգեկան տառապանքների: Եւ թող ձեզ չզարմացնի, յարգելի բարեկամներ, եթէ մենք արտայայտենք եւս մէկ, առաջին հայեացքից տարօրինակ, ցանկութիւն, որ ծագեց մեր մէջ այս օրերին. գոնէ Ղարաբաղը յաղնուէր սահմանի այն կողմում, Թուրքիայում, մեր գերուած զաւակների՝ Վասպուրականի, Մուշի, Պիթլիսի, Էրզրումի ու միւսների կողքին: Զէ՞ որ այդ դէպքում գոյութիւն չէր ունենայ մեզ վրայ այդքան թանկ նստած այն մոլորութիւնը, թէ հնարաւոր է ուղերձների եւ ստորագրութիւնների միջոցով, աղերսելով երկրի սահմանադրութեանը՝ Լեռնային Ղարաբաղը միաւորել Խորհրդային Հայաստանի հետ ... Զէր լինի այդ փոխադարձ սառնութիւնն ու տարութիւն մեր եւ աղբրպէյճանցի գործնկերների միջեւ, որոնց հետ բարեկամներ ենք եղել, համագումարների ու յոբելեանների օրերին միմիանց ժեռք ենք սեղմել, եղբայրութեան ու բարեկամութեան մասին բառեր արտասանել...

Զէ՞ որ նաեւ Հիքմէթն ու ես վաղմի բարեկամներ էինք, չնայած եւ, սահմանի այն կողմում մնացած մեր զաւեռած հողերն ու որբացած յուշարձանները յաւերժ ապրել են իմ մէջ: Իւրաքանչիւր հանդիպմանը մեզ համար արդէն սովորութիւն էր դարձել գրկախառնուելը՝ ինչպես քոյրը եղբօր հետ եւ, ահաւ, անգամ ես մի պահ ընկրկում էի ու կէս լուրջ-կէս կատակ կրկնում. «Հողերը: Նախ վերադարձրէ մեր հոդերը, յետոյ՝ կը գրկախառնուենք»: Միշտ ժպտադէմ, պայծառատես Հիքմէթը պատասխանում էր. «Եթէ պատխուճիւն լինի՝ անպայման կը վերադարձնեմ»...

Որտեղի՞ց իմանար մեծ մարդասէրն ու կոմունիստը, որ իր եւ իմ կողմից գովերգուած կոմունիստական երկրում, բաղձալի յեղափոխութեան յաղթանակից 70 տարի անց 15 թուի մի նոր կիրառում է լինելու. խաբէութեան ու բռնութեան գնով գերուելու են ոչ-միայն ուրիշների հողերը ու յուշարձանները, այլեւ՝ մարդը, կենդանի մարդը եւ, որ իր՝ Հիքմէթի ցեղակից գրողներն ու մշակոյթի գործիչները ցասալի թեթեւութեամբ մոռացութեան են մատնելու էնգէլսի բառերը. «Զի կարող ազատ լինել այն ժողովուրդը, որը կեղեքում է ուրիշ ժողովուրդների»:

Թանկագին ընկերներ, մենք բոլորս գիտենք եւ մեր գրքերում, բանաստեղծութիւններում, բեմերից անդուլ կերպով կրկնում ենք, որ մարդու համար ամենաթանկը ազատութիւնն է, մարդկային ինքնասրութիւնը, արժանապատուութեան զգացումը: Մենք ամէնքս ընդգոռում ու գոռում ենք Սամկայիթի մասին: Սումկայիթը մարդու ֆիզիքական ոչնչացումն է, ա՛յն ցեղի «ազգային կատարելատիպն» ու նախնական, դասական գոյակերպը, որի մասին դեռ 150 տարի առաջ Վիքթոր Հիւկոյի գրած «Ցոյն տղան» բանաստեղծութեան «Ամէնուրեք մահ է ու աւերակ՝ այստեղով թուրքն է անցել» տողը թեւաւոր է դարձել աշխարհով մէկ, եւ «Այստեղով թուրք է անցել» բառերից յետոյ ոչ-մի բացատրութեան կարիք չի զգացւում:

«ՄԵՆՔ ԴԻՄՈՒՄ ԵՆՔ ՁԵԶ, ԲԱՐԵԿԱՄՆԵՐ, ԵՂԲԱՅՐՆԵՐ, ԱՐՈՒԵՍՏԻ, ԳԻՏՈՒԹԵԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԾԱՌԱՆԵՐ, ՄԱՐԴԿԱՆՑ, ՈՒՄ ՍՐՏՈՒՄ ԱՐԹՈՒՆ Է ՄԵԾ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԽԻՂՃԸ, ՕԳՆԵՑԷՔ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՆ»...

Մեր հասարակութեան համար, հասարակութիւն, որը մարդու գոյութեան նոր, առաւել մարդասիրական ուղիներ է փնտռում, պակաս ամօթալի չեն՝ բարեկամութեան մասին ցուցապաստառներով վարպետօրէն քողարկուած՝ բռնութեան հնարամիտ ձեւերը, եւ մարդը չի կամենում, իսկ նրան պարտադրում է ապրել այլազգի դաժան դրածոների աճելի իշխանութեան տակ, դրանց կամայականութիւններից յաւերժ կախման մէջ: Դա հակամարդասիրականն է, հակամարդկային: Դա ոչ միայն ազգի, այլեւ մարդու իրաւունքների խայտառակ տուայտանքն է:

Այդ մասին մենք բոլորս, լինեն հայերը, ռուսները, ուրրաինացիները, եւ կամ ուրիշներ, պարտաւոր ենք գոչել, ամբողջ ձայնով բողոքել, եթէ մենք իրօք բարձր գաղափարների ջատագովներն ենք:

Իսկ եթէ նուաստացուցիչ դրութիւնը, որում գտնւում են Ղարաբաղի մարդիկ, նախատեսում է Սահմանադրութեամբ, լինի դա ստալինեանը թէ՝ պրեժնեւեանը, հարկ է փոխել այդ Սահմանադրութիւնը: Սահմանադրութիւնն է մարդու համար, ոչ թէ մարդը՝ Սահմանադրութեան:

Այդ իսկ պատճառով, տեսնելով, որ Ղարաբաղի ու Հայաստանի բոլոր կոչերն ու խնդրանքները՝ ինքնավար Մարզը հայկական հանրապետութեան միացնելու մասին, մնում են անհետեւանք, մենք դիմում ենք ձեզ, բարեկամներ, եղբայրներ, արուեստի, գիտութեան ու մշակոյթի ծառաներ, մարդկանց, ում սրտում արթուն է մեծ Ռուսաստանի խիղճը, օգնեցէք Լեռնային Ղարաբաղին, բարձրացրէք ձեր ձայնն այդ բազմաչարչար աշխատաւոր մարդկանց, ամենայն յարգանքի արժանի ազատատեներին՝ ի պաշտպանութիւն:

Եթէ Լեռնային Ղարաբաղի վերամիաւորումը Հայաստանի հետ այդ աստիճան անհնարին է, թող այն մտցուի Ռուսաստանի կազմի մէջ, թող այն յատուկ ստատուսով կըցուի Խորհրդային Միութեան Գերագոյն Խորհրդին, թող նրան հնարաւորութիւն ընձեռուի ինքնավար հանրապետութիւն կոչուելու եւ դրանով իսկ, գոնէ մասամբ, ինքնուրոյն ապրելու եւ աշխատելու իրաւունք տրուի:

Իսկ ինչ վերաբերում է մեզ՝ Հայաստանի ժողովուրդին, ողջ հայ ժողովուրդին, ապա մենք վարժուել ենք հեշտութեամբ հաւատալուն ու անդրաքար խաբուելուն: Մենք այդ հաշուով՝ դարաւոր իմունիտետ ունենք եւ դանդաղօրէն, փղձկալով, դժուարութեամբ այս անգամ էլ ուշի կը գանք, կը վերականգնենք մեր ուժերը:

Ադրբեջ, վերստին կը հաւատա՞նք վերակառուցման, դա դեռ յայտնի չէ: Կեանքը ցոյց կը տայ: Միայն մի բան պարզ է, մենք կ'պահպանենք մեր հազարամեայ հոգեւոր պաշարներին ու կը շարունակենք ապրել:

«ՓԵՏՐՈՒԱՐ 27-Ի ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՕՐԸ ՀԱՄԱՐՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԱԿԱՆ ՈՒՐԱԽ ՑԱՂԹԱՆԱԿԸ, ԱՅՆ ՈՒՐԱԽ ՄԻԱՍՆՈՒԹԵԱՆ ՑԱՂԹԱՆԱԿԸ: ԱՅՆ ՑԱՂԹԱՆԱԿԸ Կ'ՕԳՆԻ ՄԵԶ ԱՊՐԵԼ, ՅՈՒՆԱՑ ԱՐԱՐԵԼ»

Մեր պատմութիւնը մի ... ծառ տարեթիւ ունի՝ 4... Այդ թուին տեղի ունեցա... լարայրի ձախտամա... ուր թուով բազմից գե... գանց պարսից զօրքի ... հրուելիս՝ հայերը ... պարտութիւն հրեցին: ... զօրավար Վարդան Մա... կոնեանն, ընկան նրա ... միւնները: Սակայն ... հայրենի հողի ու ... մդուած այդ մարտը, թող ձեզ չզարմացնի, մեր ... գրութեան մէջ մտաւ ... դանացից Տօն անունով: ... արդէն 15 դար շարունակ, ... մէն տարի, Փետրուար ... 2րդ շաբթուայ Ուրբաթ ... հայկական եկեղեցիների ... մարների ներքոյ, հանդի... ւոր պատարագով նչում ... այդ տարեթիւը՝ որպէս ... գու եւ հաւատի տօն, իմիջ... տակ Աւարայրում իրենց գ... յուխները խոնարհած անմ... Վարդանի ու նրա զինակիր... ների:

Եւ ահա մեր այդ վիճակ... պարտութիւնն օգնեց մ... յաղթելու:

Ինչպէս էլ որ մեզ վարք... բեկեն ու նսեմացնեն մեծն... ու փոքրերը, տեղակ... ու տեղական իշխանութիւն... րը, միեւնոյնն է, մենք, ... տագնապների ու յոյս... վհատութեամբ յագեցած ... նորեայ պոռթկումներ, ... րեւանցիների 700 հազար... ցոյցն ու Հայաստանի բո... ծայրերից ոտքով մեզ գ... չարասիրները, աչքե...

(ՇԱՐ.Ը 15-ՐԴ ԷՋ)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Կիրակի, 26 Յունիս, յաւարտ Ս. Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Ողբ. Տիկ. Ասղիկ Աբովեան - Մոմեցեան մահուան քառասունքին առթիւ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ:

ՁԱՒԱԿՆԵՐԸ ԷՏՈՒԱՐՏՕ ԵՒ ԽՈՒՌԱՆ, ՃՈՒՐՏԻՒՆ ԵՒ ԸՆԾԱՅԱԿԱՆ

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆԻ ԲԱՑ ՆԱՄԱԿԸ

(ԾԱՐ. 14-ՐԴ ԷՋԷՆ)

...ստորներ ծագերում բնակ-...ղ հայերի համազգային ...ղագանգը, 1988 թուական-...ի փետրուարի 27ի այդ ան-...ռանալի օրը համարում ենք մեր բազմադարեան պատմութեան ստեղնային ...ամերից մէկը, համարում ենք ժողովրդական ոգու յաղթանակը, այդ ոգու մի...սնութե՛ան յաղթանակը: Այդ յաղթանակը կօգնի մեզ ապրել, յուսալ, արարել:

Ողջ աշխարհի եւ սովետական երկրի մաքուր խիղճ ունեցող մարդիկ, նրանց ...րացաւութիւնն ու խորա-...ափանցութիւնը կ'օգնեն մեզ՝ ինչ ազգի էլ նրանք պատկանեն: Մեզ կ'օգնի իսկական ռուս մտաւորական վաղերի Բրիւսովի անունն ու գործը, որը 1918ի թուական-...ին, կամենալով հոգեպէս ստարել ցեղասպանութեան վերապրած ժողովուրդին, հաւաքեց նրա «վհատութեան վկայութիւնը» հանդիսացող բանաստեղծական ժառանգութիւնը եւ, հրատարակելով «Պոէզիա Արմենիի» հատընտիր, դրա ներածութիւնն ասարտեց այսօր էլ չափազանց արդիական հնչով բառերով. «Հայկական պատմութեան երկնակամարը բաւի-բաւի անգամ մթագնած սեւ ամպերի միջից, հայ ժողովրդի կեանքը բանիցս պարուրած ահեղ ու խեղդիչ մշուշի միջից յաղթականօրէն ճեղքել-անցել ու մինչեւ օրս էլ փայլում են հայկական բանաստեղծութեան հրավառ շողերը: Այդ փայլատակումը մեզ լաւագոյն աւետիսն է թւում Հայաստանի պատմական ճակատագրի համար նաեւ ապագայում»...

Այո, այն ժողովուրդը որը կարողանում է պարտութիւնը յաղթանակի վերածել, որըն իր հանճարեղ Նարեկացու շրթներով՝ աստուածաշունչ ամենաթողութեամբ կարող է ներել համայն մարդկութեան մեղքերը, կարողանում է Գեղարդի ժայռերը հատելով՝ ստորգետնեայ ճանապարհ կերտել դէպի երկինք, դէպի լոյսը, – այդ ժողովուրդը յարատեւելու է:

Նա ի'նքն է նուաճել իր ապրելու իրաւունքը...

ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ
05-04-88 թ.
Բիւրական

ԼՈՒՐՏԻ ԲՈՒԺՈՒՄՆԵՐԸ

(ԾԱՐ. 10-ՐԴ ԷՋԷՆ)

...ած բժշկական վկայութեամբ, ու նաեւ եպիսկոպոսը աՇնեցի աւելի սիրայօժար կ'ընդունէր վկայութիւնը այն բժիշկներուն որոնք կա՛մ կապուած չէին եւ կամ ամէն տեսակ հաւատիի բացայայտ ջատիներ էին:

ՖՐԱՆՑ ՎԵՐՖԷԼԻ
«Մեռնատէթի երգը» Հատորէն
(4-րդ Մաս - 7-րդ Գլուխ)
Անգլերէնէ Թարգմանեց
ՄԱՆԱԿ ՊԱԼԸԳՃԵԱՆ

ՖՐԱՆՑ ՎԵՐՖԷԼԻ ՄԱՍԻՆ

Ինծի օգտակար եղաւ ազատիտոհ հռչակաւոր գրագէտի մը՝ Ֆրանց Վերֆէլի իրական պատահարը: Վերջին պատերազմին ընթացքին, ան իր կըռիւ հետ սողոսկեր էր Ֆրանսայի գրաւուած մասին սահմանագիծին Հարաւային Ֆրանսա, մինչ կեսթափօն կը հետապնդէր զինք: Եթէ բռնուէին, այր եւ կին կեդրոնացման ճամբար մը պիտի նետէին: Անոնք կը յուսային Ֆրանսայէն դուրս ելնել, բայց սպանիական իշխանութիւնները փակած էին ճամբան իրենց առջեւ: Կաշառք եւ աղաչանք հաւասարապէս անզօր մնացին: Անոնք տոհմագիտ ապաստանիլ Լուրտ: Պիրենեան լեռներու այդ պզտիկ քաղաքին մէջ, առաջին գիշերը, փախստական գրագէտը գնաց համբաւաւոր սրբավայրին առջեւ եւ անհաւատի աղօթք մը ըրաւ, սրտի իսկական աղաղակ մը:

– Հաւատք չունիմ, ըսաւ ան ճշդիւ, եւ պէտք է պարկեշտօրէն յայտարարեմ ասիկա: Բայց մեծ վտանգի մը մէջ եմ եւ այս վտանգաւոր կացութեան մէջ՝ ենթադրելով որ Աստուած իրապէս գոյութիւն ունի՝ օգնութեան կոչ մը կ'ուղղեմ: Եթէ մեզ անվտանգ անցնիլ տաք սահմանագիծը, կը խոստանամ որ երբ Միացեալ Նահանգներ հասնիմ՝ պիտի գրեմ պատմութիւնը այս սրբավայրին, որպէսզի ամբողջ աշխարհ գիտնայ զայն:

Իր աղօթքը վերջացնելով, ան վերադարձաւ պանդոկ: Հետագային ան ինծի պատմեց թէ երբեք չէր զգացած այդքան խոր խաղաղութիւն մը. անդորրութիւն մը կը պարուրէր զինք. ինք հասած էր հինգ զգայարանքներու բանտէն անդին գտնուող քանի մը:

Որքան ալ տարօրինակ թուի ասիկա, Ֆրանց Վերֆէլ եւ իր կինը չաբաթ մը չանցած անցան սահմանագիծը: Ողջ առողջ Միացեալ Նահանգներ հասնելէ ետք իր առաջին գործը եղաւ «Պեռնատէթի երգը» գրելը: Երբեք այդքան չողշողուն յարգանք չէ ընծայուած հատուածին: Իր կացութեան սարսափին մէջ, Վերֆէլ յանգեցաւ Աստուծոյ ճանաչումին եւ երբեք չկորսնցուց Անոր ներկայութեան զգացումը:

ՖՈՒԼԹըՆ ԱՈՒՐՍԼԸՐ
(Ամերիկացի Գրող)
Անգլ. Թարգմ. Ս. Պ.

ԴԱՍԸՆԹԱՑՔ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՒԱԳԱՐԱՆՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

(ԾԱՐ. 10-ՐԴ ԷՋԷՆ)

...ան հայկական աղեղնային գործիքները՝ գլխաւորութեամբ ջմանիին եւ երկկեզակաւոր փողայիններ զուռնան եւ դուդուկը: Վերոյիշեալը նիւթերը աւելի մատչելի դարձնելու համար պատրաստուած էին սահիկներ (diapositiva), որոնցմէ զատ նաեւ ցուցադրութեան մատ 25-ի հասնող իսկական գործիքներ: Ներկաները առիթը ունեցան ունկնդրելու յատուկ ձայնագրութիւններ, իսկ տարբեր նիստերու ընթացքին ելոյթ ունեցան՝ Մարիօ Քիւրլիս (քանոն եւ ուտ), Հուսիկ Գարլոս Զունկուրեան (սազ), Միկէլ Սամուէլեան (դհոլ), Արմէն Պէզազեան (դուդուկ) եւ Ֆէրնանտօ Հաճիմանուկեան (զուռնա):

Դասընթացքի աւարտին քաղաքապետութեան անունով յատուկ վկայագիր տրուեցաւ զայն ամբողջացնողներուն, որոնք իրենց թիւով միշտ լեցուն պահեցին դասասրահը: Սոյն նախաձեռնութեամբ, Հայագիտական Ումանց Հիմնարկը կը հետապնդէր իր նախնական նպատակներէն մին՝ հայ մշակոյթը տարածել օտար մասնագիտացուած շրջանակներու մէջ. բան մը, որ այս պարագային յաջողութեամբ պսակուեցաւ: Այսուհանդերձ, նկատի ունենալով հայ կրթական շրջանակներու մէջ այս նիւթին չուրջ տիրող անտեղեակութիւնը, մամուլին մէջ լոյս տեսած ծանուցումները կը միտէին դասընթացքէն ներս ներգրաւել յատկապէս նաեւ հայ ուսուցիչներ: Ցաւալիօրէն սակայն, օտար բազմաթիւ մասնակիցներու շարքին կը գտնուէր միայն մէկ հայ:

ԽԱՉԲԱՌ ԹԻՒ 29



«Ու»ն մէկ գիր հաշուել

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

1.– Հիացիկ: 2.– Պոլսահայերու անմահական կերակուրին զարդը – Եգիպտական չաստուած: 3.– 5400 – ածխային դժուարակէզ նիւթ: 4.– Կէս աւազակ–խազ մը: 5.– Ոհժաս-պառ – սահմանուած գին: 6.– Միւնչեւ – աչէն ձախ՝ առանց կարենալ նկչելու: 7.– Եգիպտոսի չաստուածներէն – ճիգ թափեց: 8.– Այրուբենէն գիր մը – անագի: 9.– Աչէն ձախ զարմ–6500 բիլոմեթր երկայնութիւն ունի: 10.– Ամէն լեզու կը խօսի առանց որեւէ լեզու գիտնալու:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1.– Ժամացոյց մը որ դրացիին բունը կը փախցնէ: 2.– Ցեղ – օտար լեզուով՝ մայր: 3.– Եգիպտական չաստուած – պաստան: 4.– Ուսեալ: 5.– Ունելիակ: 6.– Գայռ – սրբրիչս: 7.– Փսորել – «փիլիսոփայութիւն» բառէն 5 տառ: 8.– Զարհուրելի: 9.– Գեղեցիկ նահապետ մը – կէս անակընկալ: 10.– Նշանաւոր հնադարեան եկեղեցական որուն գրած մատեանը բանաստեղծական եւ եկեղեցական կոթող մըն է:

ԼՈՒԾՈՒՄ ԹԻՒ 28 ԽԱՉԲԱՌԻ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

7.– Կարուակ
8.– Ապրոեան
9.– Շուշան
11.– Կոկոնի
12.– Ուղարկէ
15.– Կապոյտ
16.– Ցուրան
17.– Մարախ
20.– Ստուեր
21.– Առուակ
24.– Կակաչ
26.– Խունկի
29.– Առաւօտ
30.– Իբթիհատ
31.– Ամասիա
33.– Աճասելի
35.– Արտեւան
36.– Հայրենի

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1.– Մանուշակ
2.– Փուշ
3.– Կաղնատ
4.– Ապակեայ
5.– Բողկ
10.– Սալորի
13.– Նորատունկ
14.– Ուրփալեան
18.– Մեխակ
19.– Խոռոչ
22.– Ակասիա
25.– Լորամարգ
26.– Շողալեզի
27.– Իլիական
28.– Արտահան
32.– Սրցնել
34.– Կեցցէ



Su café molido
al gusto oriental

Gran Visir

Boedo 510.
T.E.: 97-4763

Deportivas

Armenio comienza a transitar una nueva etapa

El domingo 12 del corriente, comenzó a disputarse una nueva instancia del Campeonato de Primera División. Se trata de la denominada Liguilla Clasificación, que da derecho a su vencedor a participar en la Liguilla Pre-Libertadores 89/90.

Deportivo Armenio inició, precisamente a partir de este mini torneo, un nuevo ciclo, luego del alejamiento de la dirección técnica del señor Alberto Parsechian, tema sobre el cual no nos explayaremos en esta ocasión, pero sí abordaremos próximamente por considerar al protagonista como una persona muy merecedora de nuestra mejor atención.

Antes decíamos que Armenio empezó una etapa, y lo hizo de manera inmejorable, pues en la primera fase le tocó enfrentar a Ferrocarril Oeste, en una serie de dos partidos, al cabo de los cuales lo eliminó, pasando por consiguiente a la próxima ronda.

Al decir Armenio-Ferro, uno imagina fácilmente un fútbol aburrido, carente de ideas, un poco teniendo en cuenta lo producido por ambos equipos a lo largo del certamen recientemente finalizado y además por lo visto en sus enfrentamientos anteriores.

Y esta teoría no estuvo tan lejos de la realidad en el encuentro de ida jugado en cancha de Platense, que terminó, como es lógico suponer, con un empate en cero, y con escasas posibilidades de quebrar este marcador.

Con este antecedente se esperaba una revancha similar, y seguramente todo hincha de Armenio esperaba, a lo sumo, otra igualdad sin tantos antes que una derrota, pensando en que hasta ahora no se le había podido convertir goles a Ferro.

Pero esta vez, nada fue como estaba previsto, porque salió no un buen partido, pero sí entretenido por momentos, por la necesidad constante del local de buscar el desequilibrio. A propósito de esto, conviene aclarar que Ferro debía ganar para continuar en esta Liguilla, ya que la paridad favorecía a Armenio, por haber ocupado una posición superior en el Campeonato.

Esta obligación de triunfo, provocó que Ferro tomará la iniciativa y manejara las acciones en los primeros minutos. No extrañó entonces que a los 8 minutos, Garré mediante un tiro libre brillantemente ejecutado, estableciera la ventaja parcial.

De allí en más, Armenio fue mejorando paulatinamente, hasta que sobre los 18 minutos, consiguió el 1 a 1 definitivo. La jugada nació en los pies de Sarmiento, quien con saque de meta habilitó a Maciel. Este, en gran corrida, dejó atrás a Cúper, y ante la salida de Cancelarich, definió con pasmosa tranquilidad.

Entonces, Ferro debió arriesgar nuevamente, pero todo su esfuerzo no le alcanzó para desnivelar, pese a que tuvo varias ocasiones propicias para concretar.

Y Armenio también mostró lo suyo, pues también llevó peligro por intermedio de veloces contragolpes. En esa tarea se destacaron Ubeda y Vega en la creación y Maciel y *Oudoukian en la zona de* definición, quienes si hubieran tenido algo más de precisión, otra sería la historia en este momento.

Pero también se pudo haber perdido. No fue así porque las fallas ofensivas de los delanteros locales no lo permitieron, y porque también lo negaron continuamente los defensores de Armenio y fundamentalmente Jorge Sarmiento. El fue responsable directo gracias a sus efectivas intervenciones, del pasaporte del Deportivo Armenio para una nueva fecha, en la que deberá medirse con Platense, cotejos que se *efectuarán en el estadio* club calamar en la ciudad de Vicente López.

Daniel R. Der Avedissian

COCINA

Tarta de espárragos

(6 personas)



MASA:

125 gramos de margarina o manteca - 250 gramos de harina - 1 cucharadita de sal fina - agua helada en cantidad necesaria.

RELLENO:

1 taza de salsa blanca espesa - 1/2 taza de queso rallado - 1 taza de puntas de espárragos cocidos y picados - 2 yemas - 2 claras batidas a nieve - 7 espárragos para decorar.

PREPARACION:

Poner la harina en un bol, agregar la margarina cortada en trocitos, la sal, y amasar todo sin trabajar demasiado la masa. Incorporar el agua necesaria para unir. Dejar descansar en la heladera durante 30 minutos.

Estirar la masa muy fina y forrar un molde para tarta; mezclar la salsa blanca con el queso, las puntas de espárragos, las yemas y las claras batidas a nieve. Sazonar a gusto, volcar en la tartera y cocinar en el horno durante 35 minutos. Dejar enfriar, quitar el molde y decorar con los espárragos y un ramito de puerros. Con el mismo procedimiento se pueden preparar tartas de alcahuciles, chauchas y espinacas.

Ofsanna K. Guezikaralan

Aram Moumdjian

Su fallecimiento

El pasado 12 de junio se produjo en esta Capital el fallecimiento del señor Aram Moumdjian, prestigioso hombre de nuestra colectividad, a cuyo quehacer estuvo vinculado directamente. En el acto de su sepelio, ocurrido en el cementerio armenio de Villegas, se puso de manifiesto todo pesar de parientes, amigos y miembros de la comunidad por su lamentable desaparición.

Confitería "Armenia"

PRODUCTOS ORIENTALES

T.E.: 71-4571 Scalabrini Ortiz (ex Canning) 1347

Para las cuatro estaciones y todas las edades

Lanas "Hetesia"

EL PROFESIONAL LOS RECETA BARTAMIAN LOS DISEÑA SU HIJO LOS PREFIERE LINEA PIE/RECTOR DE ORTOPEDIA BARTAMIAN



CALZADO CORRECTIVO A PRUEBA DE CHICOS: CALIDAD Y DISEÑO

Calzado Correctivo

Calzado Deportivo

PLANTILLAS CORRECTORAS

Ortopedia Bartamian tambien las pone a sus pies

ARTICULOS DE ORTOPEDIA EN GENERAL

Descuentos desde el 30% a Obras Sociales. Consulte con su Obra Social sobre otros beneficios.

ORTOPEDIA Bartamian

Av Belgrano 1699 Tel 45 5213 Bs As

Av 7 Nº 1134 Tel 3 4935 La Plata

COCINA ORIENTAL

Especialidades Armenias

Sra. Valentina

Tel. 791-2349

-Trabajos sobre pedidos-

La **Escribanía Balassanian** *comunica su nueva característica telefónica:*

322-2768

Dr. Arturo Balassanian

Escribano

Florida 716 2º Piso - Of. "K"

Radio llamada: 311-0056 312-6383

Código: 3136

Periódico Armenio "SARDARABAD" de la ASOCIACION CULTURAL TEKEYAN

Redacción y Administración Cnel. Niceto Vega 4779 1414 - CAPITAL FEDERAL T.E.: 771-2520

Horario de atención: Lun. a Vier. de 10.00 a 19.00 hs.

Registro Nac. de la Propiedad Intelectual Nº 78.836

Director MIHRAN SARAFIAN

Corresponsalía, recepción de avisos y suscripciones en

BRASIL

Sr. Hrair Chahinian

Av. Coxingui 191 Ap. 84

Cep. 00579 - San Pablo

T.E.: 813-6731

URUGUAY

Dr. Pedro Tanielian

Benito Blanco 675 Ap. 201

T.E.: 70-3114 Montevideo